

**Universitäts- und Landesbibliothek Bonn**

**Dasatetr krôni**

g. tarw.

**Movsisean, Yowsik**

**Vaġaršapat, 1890**

**urn:nbn:de:hbz:5:1-12492**

Goussen

3451

ԴԱՍԱՏԵՏՐ

ԿՐՕՆԻ

Գ. ՏԱԲ.

ԿԱԶՄԵՑ

ՄԻԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ  
ՅՈՒՍԻԿ ՎԱՐԳԱՊԵՏ ՄՈՎՍԻՍԵԱՆ

Երկրորդ հրատարակումը.

«Անկնդիր եւ տես բարոյսի սրտի.  
«զոր եզանակես բերանով՝ հաւատա-  
«ցես եւ սրտիւ, եւ որոյ հաւատա-  
«սրտիւ՝ զնորին եւ գործով ցուցցես»

Մաշտոց ձեռնագրութեան

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂՈՍԻ ԷԶՄԻԱԾՆԻ

1890—ՌՅԼԹ

Goussen 3451

Johnson 3451

**ԴԱՍԱՏԵՏՐ**

**Կ Ր Օ Ն Ի**

**Գ. ՏԱՐԻ.**

**ԿԱԶՄԵՑ**

**ՄԻԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ  
ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԻՍԵԱՆ**

*Երկրորդ արտագրո-վի-ն.*

ՅՈՒՅՆԱ ՄՅՈՅՄՅՈՅՆ ԿՍՈՍՎՐԻՈՒՊՆՐ

«Ունկնդիր եւ տես բոլորով սրտիւ,  
«գոր եղանակես բերանով՝ հաւատաս-  
«ցես եւ սրտիւ, եւ որոց հաւատաս  
«սրտիւ՝ զնոսին եւ գործով ցուցցես»

Մուտոց ձեռնագրութեան

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ**

**Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ**

**1890—ՌՅԼԹ**

3451

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

Գ Լ Ե Մ Ի

Կ Ե Մ Ի Գ

ՀՐԱՄԱՆԱԻ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՒՂՈՍԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ԿՐԻՍՏՈՍԻ

1880—0816

ԴԱՍԱՏԵՏՐ

Կ Ր Օ Ն Ի

Գ. Լ. Ա.

Տէառն ընդ առաջ (Ղաւկ. Գլ. Բ. 22-40).

Հրէից օրէնքով երբ արու զաւակը քառասուն օրական լինէր, պէտք է երկու աղաւնու ձագ կամ տատարակ աւաճ՝ տանէին տաճարը. քաջանան նուէրն ընդունելով, տղային կ'օրհնէր Աստուծոյ անունով և ծընողներին կը յանձնէր: Յիսուսին էլ, երբ քառասուն օրական դարձաւ, Մարիամ՝ Աստուածածինը տարաւ տաճարը: Երուսաղէմում այդ ժամանակ մի ծեր մարդ կար Սիմէօն անունով: Սիմէօնն արդար մարդ էր և

խնդրել էր Աստուծուց չըմբռնել մինչև Յիսուսին տեսնելը. և երբ Ս. Հոգևով իմացաւ Յիսուսի տաճար բերուելը շտապեց Յիսուսի առաջը, մանուկ Յիսուսին գիրկն առաւ, Աստուծուն փառք տուեց ու ասաց. Տէր, թող այժմ հանգիստ մեռնեմ որովհետև տեսայ ժողովրդին փրկողը. նա հեթանոսներին լոյս և հրէաներին փառք է ծագել: Մարիամ սուրբ կոյսն ու Յովսէփն զարմացաց էին Յիսուսի մասին խօսքերը լսելով: Սիմէօն ծերունին Ս. կոյս Մարիամին էլ օրհնեց և յայտնեց որ Յիսուս հրէաների մէջ շատերի գըլորուելու և կանգնելու պատճառ և հակառակութեան նշան պէտք է գառնայ և Մարիամ սուրբ կոյսն էլ շատ նեղութիւններ վիշտ և կսկիծ պէտք է տեսնի: Տաճարի մէջ 84 տարեկան Աննա անուշտով մի այրի կին էլ կար, որ տաճարից չէր հեռանում. այլ պահք պահելով և աղօթք անելով գիշեր ցերեկ ծառայում էր տաճարին. սա էլ Յիսուսի տաճար բերուելը տեսնելով՝ սկսեց Աստուծուն փառք տալ և աչքալոյս էր տա-

լիս նոցա՝ որոնք Յիսուսի աշխարհ գալուսն  
սպասում էին:

Տաճարում ամեն լսան օրէնքի համեմատ  
կատարելուց յետոյ Մարիամ սուրբ կոյսն  
ու Յովսէփ առան Յիսուսին և գնացին  
Գալիլեա և բնակուեցին Նազարէթ քաղա-  
քում. այս պատճառով էլ Յիսուս Նազով-  
րեցի կամ Նազարեթացի է կոչւում:

— Յիսուսի քառասնօրեայ տաճար բեր-  
ուելու տօնը Տեառնընդառաջ է կոչւում,  
որովհետև Սիմէօն Տերունին Յիսուսի առա-  
ջը դուրս եկաւ: Տեառնընդառաջի տօնը  
կատարւում է փետրվարի 14-ին մեծ հան-  
գիստի:

\* \* \*

### ԵՐԳ ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Քրիստոս փառաց թագաւորն, այսօր ե-  
կեալ յընծայումն:

Կատարելով նա զօրէնս քառասնօրեայ  
գալստեամբն:

Զոր մարգարէն Եսայի յառաջագոյն գու-  
շակեաց :

Երուսաղէմ քաղաքին, Սիմէօնի ծե-  
րունւոյն :

---

Գ. 1. Բ.

Յաւհաննէս Մկրտիչ Մկրտո-Րէ-ն և Աստու-  
շայայանո-Րէ-ն Քրիստոսէ .

Զաքարիա անուռով մի քահանայ կար,  
կնոջ անուռը Եղիսարէթ էր, և ամուլ էր  
Եղիսարէթ : Թէ մարդ թէ կին ծերացած էին  
և զաւակ չունէին : Մի անգամ Զաքարիան  
տաճարում աղօթում էր, Աստուծոյ հրեշ-  
տակը երևեց նորան և ասաց. Զաքարիա,  
գու մի որդի պէտքէ ունենաս և անուռը  
Յովհաննէս պէտքէ դնես : Նա մեծ մարդ  
պէտքէ դառնայ և ժողովրդին պէտքէ քա-  
րողի՝ որ ապաշխարեն : Զաքարիան չըհա-

ւատաց որովհետեւ ինքն ծերացած էր, իսկ իւր կին Նղիսարէթ երեխայ բերելու ժամանակն արգէն վաղուց անց կացրած պառաւ: Հրեշտակը ասաց, որովհետեւ չհաւատացիր իմ ասածին, մինչև երեխայի ծնունդը պապանձուած մնաս: Զաքարիան պապանձուեց՝ էլ յէր կարողանում խօսել (Ղ. 1-4. ա. 5-25):

Հրեշտակի ասածին պէս, Նղիսարէթ իւր ժամանակին մի տղայ ծնաւ. ութօրից յետոյ երբ կամենումէին երեխային անուն դնել, կամեցան իմանալ թէ Զաքարիան ինչ անուն կըցանկանայ: Զաքարիան առաւ տախտակ և վերան գրեց. Գորանունը Յովհաննէս է, իսկոյն լեզուն բացուեց և սկսեց Աստուծուն փառք տալ. մանուկը մեծացաւ և անապատի մէջ ճըգնաւորական կեանք էր վարում. (Ղ. 1-4. ա. 57-80):

Յովհաննէս անապատում Յորդանան գետի մօտ քարոզումէր ժողովրդին՝ որ ապաշխարեն և ապաշխարողներին էլ Յոր-

դանան գետում մկրտումէր: Յովհաննէսի  
քարոզութիւնը լսելու շատ մարդիկ էին  
գալիս և Յովհաննէս Յիսուսի համար մար-  
գարէանալով՝ ասումէր ժողովրդին, ես ձեզ  
ջրով մկրտումեմ՝ ազաշխարհելու համար,  
ինձանից յետոյ եկողը ձեզ սուրբ Հոգւով  
և հրով կրմկրտի (Մատթ. 3. 1—19,  
Մարկ. 7.):

Յովհաննէս երբ տեսաւ Յիսուսին, ժո-  
ղովրդին ասաց. ահա Աստուծոյ գառը որ  
աշխարհի մեզքը պէտքէ ջնջի. Սա է, որի  
համար ասումէի ինձանից յետոյ մէկը կըգայ  
որ ինձանից առաջ կար (Յովհ. 1. 29—30):

Յիսուս կամենումէր մկրտուիլ, բայց  
Յովհաննէսը հրաժարւումէր ասելով. Նս  
քեզանից պէտք է մկրտուիմ, դո՛ւ ես ինձ  
մօտ գալիս: Յիսուս ասաց. թող տուր,  
այժմ այսպէս է վայել: Յիսուս երբ մրկրտ-  
ւումէր, Նրկինքը բացուեց Սուրբ Հոգին  
աղաւնու կերպարանքով իջաւ նորայ վերայ  
և երկնքից ձայն եկաւ, որ ասում էր իմ  
սիրելի որդին դա՛ է, որին կամենում եմ

( Մ. Կ. Գ. Գ. ) Գորան լսեցէք. այդ ձայնը  
Հայր Աստուծոյ ձայնն էր :

— Յիսուսի մկրտութեան ժամանակ սուրբ  
Երրորդութիւնը յայտնի եղաւ աշխարհին.  
որովհետեւ Աստուծոյ միածին որդի Յիսուս  
մկրտվում է. Ս. Հոգին ազաւնակերպ իջաւ  
նորա վերայ և Հայր Աստուած ձայն տուեց  
թէ դա է իմ սիրելի որդին : Որովհետեւ այդ  
օրը Ս. Երրորդութիւնը յայտնուեց աշ-  
խարհին, այս պատճառով այդ տօնը Աս-  
տուածայայտնութեան տօն է կոչվում : Յի-  
սուսի մկրտութեան և Աստուածայայտնու-  
թեան տօնը կատարվում է Յունվարի 6-ին  
Ս. պատարագին : Յիսուս երեսուն տարե-  
կան հասակում մկրտուեց, և այնուհետեւ  
սկսեց իւր քարոզութիւնները :

Յիսուսի մկրտութեան յիշատակի համար  
Ս. պատարագից յետոյ հանգիստօր կեր-  
պով ջուր է օրհնվում և տօնը Զրօրհնէք  
էլ է կոչվում :

ԵՐԳ. ՋՐՕՐՀՆԵԱՑ.

Ով զարմանալի խորհուրդ այս մեծ յայտ-  
նեալ.

Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ.

Կամէր մկրտիլ ի ծառայէ իւրմէ,

Չառնոյր Կարապետն զմկրտիչն ի յանձն:

Յորդանան լուեալ փախստական դառնայր,

Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր.

Գեա, մի զարհուրիւր, քո արարիչն եմ ես,

Եկեալ մկրտիմ և լուանամ զմեզս:

\* \*  
\*

Այսօր ձայնն հայրական, յերկնից իջեալ  
հաճոյական, սիրեցելոյ որդւոյ վկայն:

Այ յորդորէ, գեա յորդորէ գեա Յոր-  
դանան:

Յորդորական ձայնիւ երգէր մեծ կարա-  
պետն Յովհաննէս:

Գառա ընդ զմեզ Գ. Լ. Գ. Գ. Կապարա ի սրբոյ  
ճշմանս ընդ զմեզ զմեզ զմեզ զմեզ զմեզ  
Մաղկապատ.

Յիսուս շատ քարոզութիւններ ու հը-  
րաշքներ գործեց, որով բազմաթիւ հեռե-  
ւորներ ունեցաւ. այդ հեռեւորներից տասն  
և երկու հոգի միշտ Յիսուսի հետ էին և  
նորա ասածներին ու արածներին վկայ էին.  
Գործա Յիսուսի աշակերտներն էին, որ Յի-  
սուսի հրամանով բոլոր աշխարհ քարոզելու  
ուղարկուելուն համար առաքեալ կոչուե-  
ցին: Առաքարոսին յարութիւն տալուց յե-  
տոյ երբ Յիսուս իւր առաքեալների հետ  
Զատիկի տօնին Բեթանիայից Նրուսաղէմ էր  
գնում, երբ հասաւ Զիթենեաց սարը իւր  
առաքեալներից երկուսին ուղարկեց մօտիկ  
Բեթբազէ գիւղը հեծնելու համար էշ բե-  
րելու. գնացողները եկան և էշը իւր աւա-  
նակով բերին. Յիսուսը նստած էշին երբ  
Զիթենեաց սարից դէպի Նրուսաղէմ էր իջ-  
նում, ժողովուրդը մի օր առաջ տեսած լի-

նելով Ասղարոսի յարութիւնը ընդ առաջ  
դուրս եկաւ, ոմանք իրանց հանդերձներն  
էին փռում Յիսուսի անցած ճանապարհի  
վերայ, ոմանք ձիթենու և ոմանք էլ ար-  
մաւենաւ ճիւղեր: Եւ ժողովաւորը ետեւից  
և առաջից գնալով՝ գոչումէին.

Կեցցէ՛ր Ռաւթի որդին. Օրհնումս լինի  
Տիրոջ անունով եկողը:

Ռաւթը հրէաների թագաւորն էր Յի-  
սուս նորա ցեղից լինելով՝ նորա որդին և  
ժառանգ էր համարւում:

Յիսուս երբ այսպիսի վառքով մտաւ  
Երուսաղէմ, բոլոր քաղաքը դրդաց, և  
հարցնում էին. ով կըլինի սա. Յիսուսի հեա-  
կողները պատասխանում էին. Պալիլեայի  
Նաղարէթ քաղաքացի մարգարէ Յիսուսն է:  
Յիսուս գնաց տաճարը, տեսնելով այնտեղ  
աղաւնի վաճառողներին, լումայափոխներին  
(սառաֆ) և այլ վաճառականներին, որ առ-  
և տուր էին անում, բարկացաւ. չուանից  
խարաղան շինեց բոլորին էլ դուրս արեց,  
նոցա սեղանները և աթոռները շուռ տա-

լով և ասաց. դրուած է որ իմ սուներ  
աղօթքի տուն պէտք է կոչուի. դուք աւա-  
զակների այր էք գարծրել:

Տաճարի մէջ եղած կոյրերը, կազերը և  
անդամալոյծները մօտեցան Յիսուսին և  
ստուգեին. Տէր, մեզ խղճա՛. Յիսուս էլ  
խղճաց նոցա և բժշկեց. իսկ մանուկները  
տաճարի մէջ շարուհակումէին աղաղակել.  
Կեցցէ՛ Դաւթի որդին:

Քահանայապետները տեսնելով Յիսուսի  
հրաշքները զարմացան, լսելով մանուկների  
աղաղակը բարկացան ու ասացին. Չե՞ս լը-  
սում թէ դոքա ինչ են աղաղակում. Յի-  
սուս պատասխանեց. Այո՛. դուք էլ չէք  
կարդացել թէ ծճկեր տղաների բերանով  
փառաբանուեցիր: Եւ թողնելով նոցա՝ գնաց  
Բեթանիա ու այնտեղ մնաց:

— Յիսուսի Երուսաղէմ գալու յիշատակը  
տօնվում է Զատիկից մի շաբաթ առաջ. և  
որովհետև այդ օրը ժամերգութեան ժա-  
մանակ, Յիսուսի Երուսաղէմ մտնելու փա-  
ռաւորութիւնը յիշելու համար ձեռքները

կանաչ ճիւղ են առնում, այս պատճառով  
այդ տօնը Մաղկազարդ էլ է կոչվում:

\* \*  
\*

**ՀԱՐԱԿԱՆ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ.**

ԴՅ. Յորժամ եկն Յիսուս յԵրուսաղէմ  
ի քաղաքն, ընդ առաջ ելին ծերքն ոստովք  
ձիթենեօք և զԱստուած որդին փառաւո-  
րէին:

Ի լեռնէն ձիթենեօց տարածանէին ման-  
կունք զհանդերձս իւրեանց: և ոստս  
ի ծառոց բերեալ մատուցանէին Աստուա-  
ծորդւոյն սուրբ թագաւորին:

Ոստովք և տերեւալ ձիթենեօք Երրա-  
յեցւոց մանկունքն օրհնէին, Ուրախ լին  
Երուսաղէմ քաղաք և ցնծա՛ Սիօն մայր  
եկեղեցի:



ԳԼ. Դ.

Յիսուսի վերջին օրերը.

Ձանազան ժամանակներում իրանց չարութեան համար Յիսուսից յանդիմանուած հրէից մեծամեծները նորա փառաւոր մուտքըն էլ տեսնելով աւելի ևս կատաղած, Յիսուսին կորցնելու պատճառ էին փրնուում, բայց ժողովրդից վախենումէին, որովհետև ժողովուրդը արդէն Յիսուսի կողմն էր: Այդ մեծամեծները ժողովրդին Յիսուսի դէմ գրգռելու համար Յիսուսին մեղադրում էին աօելով թէ, նա հրէական օրէնքները չէ պահում, օրէնքի հակառակ բաներ է անում ու քարոզում, մարդ է, և իրան Աստուծոյ որդի է կոչում, և իշխանութիւնը գրգռելու համար ասումէին թէ Յիսուս իրան Գաւթի որդի անուանելով՝ կամենում է հրէից կործանուած թագաւորութիւնը հաստատել և և ինքն թագաւորել, ուստի և ժողովրդին

գրգռում է որ տէրութեանը հարկ չըտան  
ու չըհնազանդեն: Յիսուս հրէից օրէնքին  
դէմ գործելուն համար այդ օրէնքով պէտք  
է քարկործուէր, իսկ տէրութեան հակա-  
ռակ լինելուն համար՝ Հռովմայեցւոց օրէն-  
քով պէտք է խաչուէր, որովհետեւ այդ  
ժամանակ Հրէաստանը Հռովմայեցւոց իշ-  
խանութեան տակ էր և այդ իշխանութեան  
դէմ մտածողները խաչվում էին: Այս բա-  
ները աչքի առաջ ունենալով հրէից քահա-  
նայապետները որի անունը կայիափա էր,  
ասաց. լավ է որ մի մարդ ժողովրդի համար  
մեռնի քան բոլոր ժողովուրդը կորչի:  
Հրէաները թէպէտ այս մեղքերը դնում  
էին Յիսուսի վերայ բայց հաստատուն փոս-  
տեր չունէին, որովհետեւ Յիսուս յանմեղ  
էր: Բացի սորանից, Յիսուսին չէին տէր  
կարողանում գտնել, որովհետեւ չէին ճա-  
նաչում: Յիսուսի 12 առարեւելիներից Յու-  
դա Իսկարիովտացին մտքով փոզաներ  
մարդ էր, իմանալով հրէաների ամբար, զ-  
հասց հոցա մտա և Յիսուսին համարեւ

Համար փայլ պահանջեց. նորա էլ սերախու-  
թեամբ երեսուն արծաթ տուին: Յիսուս  
իւր անուն ամային իմաստութեամբ խնայաւ  
Հրէաների դիտաւորութիւնը և Յուդայի  
չորսութիւնը ունախ և բազարջակերաց աս-  
նի հինգ շարթի օրը, առաւ իւր աշակերա-  
ներին գնաց մի վերնատուն սւր ընթրիքը  
պատրաստուած էր: Ընթրիքի ժամանակ  
Յիսուս յայտնեց աշակերաներին թէ հրէա-  
ները իրան պէտք է սպանին և աշակերա-  
ներից մէկը պէտք է լինի մատնողը. Յիսուս  
ասաց որ ինքն երեք օրից յետոյ յարու-  
թիւն կառնի թայց լայ մատնողին: Աշա-  
կերաները լսելով այս տրամեցին և Յի-  
սուսի սիրելի անաքեալ Յովհաննէսը ընկաւ  
Յիսուսի վզովն ու ասաց. Տէր, սի՛ էք թեզ  
մատնողը: Յիսուս պատասխանեց. պատա-  
ռը ում տամ նա է: Եւ պատառը Յու-  
դային սալով հասց. գնա՛ ինչ օր անելու  
ես արա՛: Յուդան գնաց:  
Յիսուս շարունակելով իւր չարչարանքի  
և մահաւան զերան խօսիլը՝ պատուիրեց

առաքեալներին որ միմեանց սիրեն, իրան  
յիշելու համար առաւ բաղարջ հացը իւր  
մարմնի տեղ և գինին իւր արիւնի տեղ  
օրհնեց և տուեց նոցա, պատուիրելով  
նոյն իւր յիշատակի համար միշտ կրկնել,  
այսպիսով հաստատեց սուրբ Հաղորդու-  
թեան և Ս. պատարագի խորհուրդը, և  
խոստացաւ նոցա մխիթարելու համար ու-  
ղարկել սուրբ Հոգին: Ս. յս ժամանակ երբ  
Յիսուս իւր մահուան համար էր խօսում,  
աշակերտներն սկսեցին մտածել թէ այնու-  
հետեւ իրանց մեծը ով կլինի: Յիսուս իմա-  
նալով նոցա միտքը ասաց. Ով որ կամե-  
նումէ մեծ լինել թող ամենքին ծառան և  
փոքրը լինի, և նոցա խոնարհութիւն ու-  
սուցանելու համար լուաց նոցա ոտները  
պատուիրելով որ նոքա էլ միմեանց ոտք  
լուանան:

— Ս. Հաղորդութեան և Ոտնալուայի յի-  
շատակ կատարվումէ աւագ հինգշաբթի  
օրը, առաջինը Ս. պատարագի և երկրորդը  
երեկոյեան ժամերգութեան ժամանակ:

ԳԼ. Ե.

Յիսուսի Տապանելը և Գապուելը.

Ոտնալուացից յետոյ Յիսուս աշակերտնե-  
րի հետ գնաց Չիթենեաց լեռը աղօթելու:  
Գիշեր էր: Յիսուս աշակերտներին թողնե-  
լով Գիթսեմանի պարտիզում ինքն առանձ-  
նացաւ, մեծ տագնապի մէջ էր քրտինքը  
ուռն ուռն թափւումէր վերայից, այս  
գառն ժամին հրեշտակը մօտեցաւ և սիրտ  
էր տալիս: Ահա և Յուդան հետն առած  
հրէաներին և սրերով, բրերով զինուած  
ամբոխը, ջահերը ձեռքներին, եկաւ Յի-  
սուսի կացած տեղը, մօտեցաւ Յիսուսին  
և համբուրեց, որովհետեւ սսել էր հրէանե-  
րն ում որ համբուրեմ նա է Յիսուս  
բռնեցէք: Յիսուս իմանալով Յուդայի  
համբոյրի նշանակութիւնը, ասաց, Յուդայ  
ինձ համբուրելով ես մատնում: Հրէաները  
յարձակուեցին Յիսուսին բռնել, աշակերտ-

ները կամեցան զիմագրել և կռուել, և  
աշակերտներից Պետրոսը որ սուր էլ սենէր  
զարկեց քահանայապետի ծառայի ականջը  
կտրեց. Յիսուս աշակերտների վերայ բարկա-  
ցաւ. կտրուած ականջը բժշկեց, և հրէա-  
ներին յայնդ իմանեց, յամելով յարերով և  
բրերով առազակի վերայ էք եկել. միշտ ձեզ  
հետ էի տաճարի մէջ և առանց ցանու մէջ  
ինչու չբռնեցիք ինձ: Եւստի յայնչ Երմիայի  
Յիսուսին բռնելով տարան անաջ Անհա-  
քահանայապետի մօտ, որ նկսեց Յիսուսից  
տեղեկս թիւն հարցնել նորա զքարոզու-  
թիւնների և աշակերտների մասին: Յիսուս  
վտասու թեամբ պատասխանեց. Եւ միշտ  
Ժողովրդի առաջ, տաճարի մէջն եմ յոռով-  
րեցրել յայանի համարձակ. ծածուկ զբան-  
ջեմ խօսել, ինձ ինչու եւ հարցնու մ. հար-  
ցրու լսողներին. ինչ որ խօսել եմ նորա  
գիտեն: Թի ահանայապետի ծառայներից մէկը  
Յիսուսի պատասխանը խիստ համարելով ար-  
տակեց և շասնայ. այդպէս պատասխան զկր-  
տան քահանայապետին: Յիսուս պատասխա-

նեց. եթէ չար բան ասացի, վկայիր. արդար  
թէ ոչ, ինչո՞ւ ես ինձ զարկում: Կապտափայի մօտ  
ուղարկեց: Երբ շոյսը բացուեց, Յիսուսին Կայտափայի  
մօտից տարան Պիղատոսի մօտ. և որովհետեւ Պիղատոս կռտարաշտ էր. հրէա-  
ները չբնական ներս որ չբարձուեն. Պիղատոս  
գիտենալով հրէից այս սովորութիւնը,  
ինքն դուրս եկաւ. և հրէից առաջ Յիսուս  
սին հարցանելով յանցանք չըգտաւ. դարձաւ  
և հրէաներին հարցրեց. ի՞նչ չար բան  
է արել սա: Հրէաները պատասխանեցին.  
եթէ չար բան արած չըլինէր քեզ մօտ  
չէինք բերել: Եւ ասացին որ Յիսուս հրէայ  
լինելով հրէական օրէնքին հակառակ քա-  
ներ է քարոզում, ու գործում, մարդ է,  
և իրան Աստուծոյ որդի է անուանում,  
ու ժողովրդին մոլորեցնում. իրան թագա-  
ւոր հռչակելով ժողովրդին գրգռում և  
տախտամբեցնում է կայսրի դէմ: Պիղատոսի  
փոյթը չէր թէ Յիսուս հրէական օրէնքին

Հակառակ է. նա յանցանք համարելով միայն  
Թագաւոր լինելու ձգտումը, Յիսուսին ա-  
ռանձին հացրեց. դ՞ու ես հրէաների Թագա-  
ւորը: Յիսուս պատասխանեց. իմ Թագաւո-  
րութիւնը այս աշխարհից չէ. ես ճշմարտու-  
թիւն խօսելու համար եմ աշխարհ եկել. ով  
ճշմարտութիւնը սիրում է, նա կըլսի ինձ:

Պիղատոս Յիսուսի վերայ յանցանք չը-  
գտնելով՝ եկաւ և ժողովուած հրէաներին  
յայտնեց որ Յիսուս անմեղ է. և որովհետև  
հրէից սովորութեան համեմատ Զատկի  
տօնին մի բանդարկեալ տխուր ազատուէր:  
Պիղատոս հարցրեց. կըկամենա՞ք Յիսուսին  
արձակեմ: Հրէաները գոչեցին. ո՛չ Բարաբրա-  
յին արձակիր: Իսկ Բարաբրան մարդասպան  
աւազակ էր: Պիղատոս չէր կամենում ան-  
մեղ Յիսուսին պատժել, ուստի երբ լսեց թէ  
նա Բաղիլեացի է, հրէաներին գլխից հեռա-  
ցնելու համար ուղարկեց Բաղիլեացի Թագա-  
ւոր Հերովդէսի մօտ, որ այդ ժամանակ  
Զատկի տօնի պատճառով Երուսաղէ-  
մումն էր գտնուում: Հերովդէս լսած լինե-

լով Յիսուսի մասին՝ շատ ցանկանում էր  
տեսնել ուստի ուրախ եղաւ որ Յիսուսին  
տեսնուով և սկսեց հետաքրքրութեամբ  
քննել բայց Յիսուս ամենեւին պատասխան  
չբոլորեց: Հերովդէս էլ յանցանք չըզանե-  
լով Յիսուսի վերայ, ծաղրելու համար վե-  
րան սպիտակ վերարկու ձգել տուեց և  
դարձեալ Պիղատոսի մօտ ուղարկեց:

Պիղատոս Յիսուսի մասին քահանայապետ-  
ներին և իշխաններին ասաց. Այս մարդուն  
ինձ մօտ բերիք որպէս խնդարար. ձեր ա-  
ռաջին քննեցի և յանցաւոր չըգտայ. ու-  
ղարկեցի Հերովդէսի մօտ, նա էլ մի ծանր  
յանցանք չըգտաւ. խրատեմ ու արձակիմ:  
Հրէաները որահանջեցին անպատճառ խա-  
չել, ասելով. Նթէ դորան չըխաչես, կայսե-  
րին բարեկամ չես. որովհետև դա կայսերին  
հակառակ իրան թագաւոր է կոչում:

Պիղատոս վախեցաւ, և մեղքը թողնելով  
հրէաների վերայ, մարդաստղան Բարաբբային  
արձակեց և անմեղ Յիսուսին հրամայեց  
խաչել:

ԳԼ. 2.  
Յիսուսի խաչն ու Տահը.

Երուսաղէմում մի բարձր տեղ կար Բող-  
գոթա անուանով, որ կրնշանակէ գլխա-  
տելու տեղ. պատիժները այդ տեղ էին կա-  
տարւում: Հրէաները խաչը գնելով Յի-  
սուսի ուսին, տարան Բողգոթա: Յիսուսի  
եակից մեծ բազմութիւն էր գնում, իսկ  
կանայք ողբում էին ու լալիս: Յիսուս դար-  
ձաւ նոցա և ասաց. Երուսաղէմի արջիկ-  
ներ, իմ վերայ մի լաք, այլ լացէք ձեր և  
ձեր զաւակների վերայ. կըգայ ժամանակ  
որ կասէք. երանի՛ ամուլներին որ որդի  
չունեցան: Իհաէր Յիսուս որ Աստուած  
հրէաների չարութեան համար նոցա պէտք է  
պատժի:

Յիսուսին խաչեցին Բողգոթայի վերայ եր-  
կու աւազակների էլ հեար, մէկը աջ և  
միւսը ձախ կողմը: Յիսուս իւր խաչող-  
ների համար աղօթումէր ու ասում. Հայր

դոցա ներիր, որովհետև չըզխտեն ինչ են  
անում:

Մահապարտների յանցանքը գրվումէր  
նոցա խաչի վերայ. Պիղատոս էլ Յիսուսի  
խաչի վերայ գրեց. Յիսուս Նազովրեցի թա-  
գաւոր հրէից. որովհետև Յիսուսին գատա-  
պարտել էր որպէս իրան թագաւոր հըւ-  
շակող անձի:

Հրէից իշխանները ժողովրդի հետ կանգ-  
նել նայումէին, նախատում և ասում. ու-  
րիշներին էր փրկում, եթէ Աստուծոյ որդի  
ընտրեալ Քրիստոսը դա է, թող իւր անձը  
փրկի: Զինուորները ծաղրելով քացախ էին  
տալիս՝ ու ասում, եթէ հրէաների թագա-  
ւորն ես, փրկիր անձդ. իսկ ձախակողմեան  
աւազակը հայհոյումէր ասելով. Քրիստոսը  
չե՞ս. քեզ էլ փրկիր մեզ էլ: Աջակողմեան  
աւազակը յանդիմանեց ընկերին ու ասաց.  
Աստուծոց չե՞ս վախենում դու, որ նոյն  
պատժի մէջն ես: Մենք մեր չար գործերի  
համար ենք պատժուած, բայց նա չար բան  
չէ արել. և, դառնալով դէպի Յիսուս ա-

սաց. տէր, երբ քո թագաւորութեամբ գաս՝  
ինձ էլ յիշիր: — Յիսուս պատասխանեց.  
ճշմարիտն եմ ասում, այսօր ինձ հետ դը-  
րախտում կըլինես:

Յիսուս խաչի վերայից իւր մօրը տեսնե-  
լով նորան մխիթարել սկսեց և յանձնեց  
իւր սիրելի աշակերտ Յովհաննէսի խնամ-  
քին, և երեք ժամ խաչի վերայ մնալուց  
յետոյ հոգին աւանգեց: Այդ ժամանակ  
արեգակը խաւարեց, երկիրը մթնեց տա-  
ճարի վարագոյրը պատռուեց և մեծ շարժ-  
եղաւ: Հսկող հարիւրապետը տեսնելով այս  
ամենը Աստուծուն փառք տուեց ու սասց  
արդարեւ այս մարդը արդար էր: Յիսուս կէս  
օրին խաչ բարձրացաւ և երեք ժամից յետոյ  
հոգին աւանգեց: Ժողովուրդը և Գալի-  
լեայից եկած կանայքը տեսան այս ամենը  
և մեծ ախրութեամբ ու սգով յետ դարձան  
(Ղ. 11-12. 13. և 14. Յ. 15. 16. և 17.):

\* \*  
\*

ՀԱՐԱԿԱՆ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ.

ԷՅ. Ով սքանչելի և տեսիլ ահաւոր, զարարիչն երկնի և երկրի այսօր տեսաք ի խաչին:

Տեսեալ զտէրն ի խաչին խաւարեցաւ արեգակն և վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչև ի վայր:

Անարգարտը խաչեցաւ Տէրն ի մէջ ի յահօրինաց, զի լոյսի գիրն, որ ասէ թէ, ընդ անօրէնս համարեցաւ:

---

ԳԼ. Է.

Յեանսի լուսան.

Ուրբաթ էր, շաբաթ օրն էլ հրէաների Ձատիկը լինելով, նոքա չըկամեցան որ խաչուածների մարմինները խաչերի վերայ մնան, ուստի Պիղատոսից հրաման առան խաչուածների ոտների սրուհքները ջարդել,

որ շուտով մեռնեն ու թաղուեն: Պիղատոս հրաման տուեց, զինուորները երկու աւագակների սրուհիները ջարդեցին, բայց Յիսուս արդէն հոգին աւանդած լինելով, զինուորներից մէկը գեղարդով խոցեց Յիսուսի կողը, որտեղից արիւն և ջուր դուրս եկաւ: — Արիւնը Յիսուսի կենդանի ատուածութեան և Ս. հաղորդութեան նշան, իսկ ջուրը մեռած մարդկութեան և Ս. մկրտութեան նշան:

Յովսէփ և Նիկողիմոս իշխանները, որ հրէաների երկիւղից ծածուկ Յիսուսին աշակերտումէին, Պիղատոսին թանկագին ընծաներ տալով՝ առան Յիսուսի մարմինը, խաչից իջեցրին, հրէաների սովորութեան համեմատ պատանեցին և թաղեցին մի նոր գերեզմանի մէջ որ Յովսէփ մօտիկ պարտիզում պատրաստել էր, գերեզմանի վերայ մի մեծ քար ձգուեց:

Մարիամ մագդաղենացին և Գալիլեայից եկած միւս կանայքը տեսնելով Յիսուսի թաղումը և թաղուած տեղը, գնացին

պատրաստուելու<sup>8</sup> որ շաբաթ օրը անցնելուց  
յետոյ գան և գերեզմանի վերայ խուսկ  
ծխեն, որովհետև հրէից օրէնքով շաբաթ  
օրը չէր կարելի բան անել: Իսկ հրէաների  
քահանայապետներն ու իշխանները գնացին  
Պիղատոսի մօտ և Յիսուսի մասին ասացին.  
տէր, միտներս եկաւ, որ այն մուրեցուցիչը  
մինչ կենդանի էր, ասում էր թէ երեք  
օրից յետոյ յարութիւն կառնեմ. պահա-  
պաններ նշանակիր որ մինչև երեք օր գե-  
րեզմանը պահպանեն. գուցէ նորա աշա-  
կերտները գան և գիշերով գողանան մար-  
մինն ու ասեն թէ յարութիւն առաւ,  
այսպիսով յետին մուրութիւնը առաջինից  
վատ կըլինի: Պիղատոսն ասաց զինուորներ  
ուսնէք, գնացէք ինչպէս կամենումէք, պահ-  
պանեցէք գերեզմանը: Հրէաները գնացին,  
զինուորների առաջ գերեզմանը կնքեցին և  
պահպանումներ կարգեցին:

\*\*\*

\*

ՀԱՐԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ.

Քյ. Պարգևատուեն ամենեցուն այսօր  
խնդրի պարգևս ի Պիղատոսէ. և արկողն  
զլոյս սրպէս զօթոց՝ հաւանի պատիլ ի Յով-  
սէփայ:

Կենդանատուեն ամենեցուն այսօր զնի  
ի նոր գերեզմանի և գանձն անմահութեան  
կնքի մատանեալ քահանայիցն:

Արարածոց վերկութիւն Քրիստոս այսօր  
եղաւ ի նորափոր վիմի. զոր օրհնեն զօրք  
երկնից երգով պահպանի ի զինուորաց:



ԳԼ. Ը.

Յիսուսի յարո-նի-նից Բնզև Հաժարչս-ն.

Յիսուս ինչպէս ասել էր, երեք օրից  
յետոյ յարութիւն առաւ այնուհետև 40  
օր էլ աշխարհիս վերայ կացաւ և շատ  
անգամ երևեց աշակերտներին: Այս երե-

ւումներից նշանաւորներն են հետեւեալ-  
ները:

Յիսուս առաջին անգամ երևեց աշա-  
կերտներին իւր յարութեան առաջին օրը  
երեկոյեանը, երբ նոքա հրէաների տհից  
գուները փակել նստել էին. այս անգամ  
իրաւունք տուեց առաքեալներին որ գնան  
հեթանոսներին քարոզեն Հօր, Արգւոյ և  
Սուրբ Հոգւոյ անունով իւր աշակերտնե-  
րից մի քանիսը գնումէին Էմմաւուս գիւղը  
ճանապարհին նոցա հետ ընկերացաւ. նոքա  
չըճանաչելով Յիսուսին սկսեցին Յիսուսի  
մասին խօսել թէ ինչպէս խաչուեց թաղ-  
ուեց, և թէ ինչպէս գերեզմանը գնացող  
կանանց ասելովը յարութիւն առաւ: Երբ  
գիւղ հասան Յիսուս նոցա հետ նստեց հաց  
ուտելու այդ ժամանակ օրհնեց հացը և  
նոցա աչքերը բաց արեց իրան ճանաչելու.  
հենց ճանաչեցին թէ ոչ, Յիսուս խկոյն  
աներևոյթ եղաւ: Էմմաւուս գնացողներն  
էլ պատմեցին առաքեալներին թէ Յիսուսին  
տեսան:

Յիսուս առաջին անգամ երբ երևեց  
առաքեալներին թովմասը նոցա մէջ չէր,  
թովմաս ասաց. մինչև չըտեսնեմ Յիսուսի  
ձեռքերի և ոտքերի և կողի խոցուածները,  
չեմ հաւատայ: Յիսուս թովմայի այս ան-  
հաւատութիւնը փարատելու համար եր-  
կրորդ անգամ երևեց առաքեալներին երբ  
թովման հետներն էր, և դարձեալ հրէա-  
ների ահից դռները փակ նստել էին:  
Առաքեալները կարծեցին թէ Յիսուսի ուր-  
ուականն են տեսնում սաստիկ վախեցան  
և շփոթուեցին. Յիսուս նոցա սիրա աւել-  
ատաց. ինչո՞ւ էք շփոթուել. ոգին (ուր-  
ուականը) մարմին և ոսկր չի ունենայ բայց  
ես ունիմ, տեսէք ձեռքերս և ոտքերըս  
թովմասը տեսաւ և հաւատաց: Յիսուս թով-  
մասին ասաց. այդ տեսար ու հաւատումես.  
երանի՛ նոցա՛ որ չըտեսած կըհաւատան:  
Նւ դառնալով աշակերտներին՝ ասաց. գնա-  
ցէք քարոզեցէք ամեն մարդու. ով հաւա-  
տայ ու մկրտուի՝ կըփրկուի. ով չի հաւա-  
տայ կըդատուարտուի:

Յիսուս երրորդ անգամ երևեց աշա-  
կերաներին երբ նոքա Գալիլեայի ծովում  
ձուկ էին որսում. նոքա ամբողջ գիշերը  
չարչարուել ու ոչինչ չէին բռնել: Առա-  
ւօտը երբ լոյսը բացուեց՝ Յիսուս երևեց՝  
նոյա և ասաց. մանուկներ, ուտելու բան  
ունի՞ք. նոքա պատասխանեցին. ոչ: Յիսուս  
պատուիրեց ուռկանը նաևի աջ կողմը  
ձգել, ձգեցին և, ուռկանը այնպէս լցուեց  
որ չէին կարողանում դուրս քաշել: Այս-  
տեղ Յիսուս աշակերաների հետ ճաշելուց  
յետոյ որովհետև Պետրոսը, երբ Յիսուս  
Աննա քահանայապետի տանն էր և չար-  
չարվում էր երեք անգամ ուրացել էր,  
նորա հաւատը հաստատելու համար երեք  
անգամ հարցրեց. Սիրո՞ւմես ինձ, երբ  
Պետրոս երեք անգամ պատասխանեց թէ  
սիրումեմ, Յիսուս նորան էլ իրաւունք  
տուեց քարոզու թիւն անելու: Յիսուս այ-  
նուհետև պատուիրեց աշակերաներին Ե-  
րուսաղէմից չը հեռանալ և ասաց. Յով-  
հաննէս մկրտիչը ջրով էր մկրտում. բայց

դուք շուտով սուրբ Հոգւով և հրով  
կը մկրտուէք:

Յիսուս իւր յարութիւնից 40 օր յետոյ  
առաւ առաքեալներին և գնաց Ձիթեհեաց  
լեռը. այնտեղ ձեռքը վեր բարձրացնելով  
օրհնեց նոցա, խոստացաւ ուղարկել սուրբ  
Հոգին որ նոցա մխիթարէ և շնորհք տայ և  
պատու իրելով Նրուսողէմում՝ սպասել մին-  
չև Ս. Հոգին ստանալը, նոցա աչքի առաջին  
ինքըն երկինք բարձրացաւ:

Աշակերտները ապշած նայում էին Յի-  
սուսի բարձրանալուն և ուհա երկու լու-  
սաւոր հրեշտակներ երևեցին նոցա և  
ասացին. Ով Գալիլեացիք, ինչո՞ւ էք գէպի  
երկինք նայում. այս Յիսուսը որ վերա-  
ցաւ երկինք՝ գարձեալ այսպէս պէտք է  
գոյ:

Աշակերտները երկրպագեցին և ուրախ  
ուրախ վերադարձան Նրուսողէմ. սպա-  
սում էին սուրբ Հոգու գալստեանը և միշտ  
տաճար գնալով՝ փառաբանում ու օրհնում  
էին Աստուծուն:

—Յիսուս շատ անգամ երևեց աշակերտներին և ուրիշներին յարութիւնից յիտոյ, որ տեսնողները վկայ լինին նորա՝ մարմնով յարութիւն առած լինելուն: Աշակերտներէ հետ հաց ուտելը դարձեալ մարմնով յարութիւն առնելու ստուգութիւնն է. ուսկանը աշակերտների քարոզութիւնն է. ուսկանի՝ ձկներով լցուիլը՝ մարդկանց հաւատալն է առաքեալների քարոզութեանը:

\* \* \*

### ՇԱՐԱԿԱՆ ՀԱՄԲԱՐՉՄԱՆ.

ԴՅ. Համբարձաւ տէրն մեր յերկինս՝ տառլով աշակերտացն՝ նստարուք ի քաղաքիդ Երուսաղէմ՝ մինչև զգինուցուք զօրութիւն ի բարձանց:

Միաբանեալ սուրբ առաքեալքն միախորհ և միակրօն, միաբան նստէին ի սուրբ մերնատանն և ական ունէին գալստեան սուրբ Հոգւոյն:

Յանկարծակի եհաս ի նմանութիւն լուսոյ փայլման, և եկեալ ընակեցաւ ի սուրբ առաքեալսն մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

ԳԼ. Թ.

Հագեգալսսի.

Յիսուսի մայրը, աշակերտներն ու հաւատացեալ թէ այր և թէ կին մարդիկ միասին Երուսաղէմումն էին և Ս. Հոգու գալստեանն էին սպասում. Յիսուսի Համբարձման տաներորդ օրը բոլորը միասին վերնատանն էին. առաւօտը յանկարծ երկնքից սաստիկ հողմի նման ձայներ լսուեցին և տունը լցուեց: Ս. յգ ժամանակ սուրբ Հոգին հրեղէն լեզուներով իջաւ ժողովուածների վերայ: Բոլորն էլ սուրբ հոգւով լցուած սկսեցին զանազան լեզուներ խօսել:

Երուսաղէմացիք երբ այս իմացան, հա-  
լաքուեցին. իսկ զանազան ազգերից եղող  
մարդիկը երբ լսում էին առաքեալների՝  
իրանց լեզուով խօսիլը, զարմանում էին.  
ոմանք էլ որ խօսուածները չէին հասկա-  
նում, ասում էին արբած են: Պետրոսը իւր  
ընկեր տաքեալների հետ կանգնեց և ա-  
սաց. դեռ առաւօտ է ուրեմն մենք արբած  
չենք. այլ այն Յիսուս Նազովրեցին, որին  
դուք, հրէաներ, խաչեցիք, յարութիւն  
առաւ և սուրբ Հոգին ուղարկեց մեզ սուրբ  
Հոգու շնորհով է որ մենք խօսում ենք և  
այդ շնորհն է որ դուք տեսնում էք, և այն  
Յիսուսը, որին դուք խաչեցիք, Աստուած  
էր: Այնտեղ եղած Հրէաները զղջացին ու  
ասացին. ուրեմն ի՞նչ անենք. Պետրոսը  
պատասխանեց. Ապաշխարեցէք և իւրա-  
քանչիւրը ձեզանից թող մկրտուի Յիսուս  
Քրիստոսի անունով, իսկ մկրտուողը կըն-  
դունի սուրբ Հոգին: Այդ օրը շատերը հա-  
լատացին և երեք հազար մարդ մկրտուեց:  
Հալատացեալները գալիս էին առաքեալների

քարոզը լսելու Ս. Հաղորդութիւնը ընդու-  
նելու և աղօթելու, առաքեալները հաւա-  
տացեալների թիւը բազմացնելու համար  
հարկաւոր ժամանակին հրաշքներ էլ էին  
գործում:

Սկզբում, քանի որ հաւատացեալները  
այնքան շատ չէին, բոլորը միասին էին ճա-  
շում. միասին աղօթում և Աստուծուն  
փառք տալիս. ոչ ոք առանձին բան չունէր.  
այլ ինչ որ կար բոլորինն էր:

\* \*  
\*

### ՀԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ.

ԳՅ. Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծա-  
ճայն հնչմամբ ի բարձանց՝ ի նմանութիւն  
լուսոյ փայլման հրազինեաց անկիզբի զա-  
շակերտս. մինչդեռ նստէին ի սուրբ վեր-  
նատանն:



ՊԼ. Ժ.

Ս. Սանդուխտ կոյսը հայս.

Ս. Սանդուխտ կոյսը Հայոց Սանատրուկ  
Թագաւորի աղջիկն էր. Ս. Հոգւոյ գալըս-  
տից յեւոյ երբ Ս. Թագագէտս առաքեալը  
եկաւ Արգարին բժշկելու, նա Արգարին էլ  
Նգեասցիներին էլ քրիստոնեայ դարձնե-  
լով՝ մկրտեց և Նգեսիայում մի եպիսկո-  
պոս ձեռնադրելով եկաւ Հայաստանի միւս  
մասերումն էլ քարոզելու. Հայաստանի մի  
մասի վերայ իշխում էր Սանատրուկ, որ  
Արգարի քրոջ որդին էր, իւր քեռուց  
քաշուելով քրիստոնեայ դարձաւ իւր բո-  
լոր ժողովրդով. բայց Արգար Փրկչի 36  
Թուին մեռաւ, և Սանատրուկ նորից կռա-  
պաշտ դարձաւ և սկսեց քրիստոնեաներին  
հալածել ու հաճատակել:

Քրիստոնեայ մնաց Սանատրուկի աղջիկ  
Ս. Սանդուխտ կոյսը. հայրը շատ համոզեց  
և խրատեց, որ Սանդուխտ Թողնի քրիս-

տոնէական հաւատը և նորից կուսակաշտութիւն ընդունի. բայց Սանդուխտ հաստատմնաց իւր հաւատին և յայտնեց որ ինքն չի կարող լոյսը խաւարի, ճշմարտութիւնը ստութեան հետ փոխել. չի կարող թողնել երկնքի և երկրի ստեղծող Աստուծուն և ձեռագործ կուռքերին պաշտել: Սանատրուկ Ս. Թագգէոս առաքեալին իւր աղջկանը մոլորեցնող համարելով Արտաղ գաւառի Շաւարշան դաշտում նահատակել տուեց: Սանդուխտ տեսնելով որ իւր ուսուցիչ և հաւատի վարդապետ Ս. Թագգէոս նահատակվում է, ինքն ևս վազեց նորա ետեւից և յայտնեց որ ինքն չի կարող իւր վարժապետից յետ մնալ, և յայտնապէս խոստովանելով քրիստոնէական հաւատը, ինքն ևս նահատակուեց նոյն Շաւարշան դաշտում Փրկչի 48 թուին:

— Հաւատացեալները թէ Ս. Թագգէոս առաքեալի և թէ Ս. Սանդուխտ կուսի մարմինները թաղեցին նոցա նահատակուած տեղը, որ իրարից հազիւ 4 վերտո հեռա-

ւորութիւն ունենայ և յետոյ երկուսի գերեզմանների վերայ էլ մատուռներ շինուեցին: Ս. Թադդէոս առաքեալի գերեզմանի վերայ յետոյ փառաւոր և մեծ վանք շինուեց և այն գաւառի արքեպիսկոպոսը այդ վանքումն էր նստում. այժմ այդ վանքը իւր առաջուայ ճոխութիւնը չունի, որովհետեւ ժողովուրդը գաղթելով այլ և այլ կողմեր համարեայ ամայի դաշտի մէջ է գտնվում, և փոքրիկ միաբանութիւն ունի իսկ Ս. Սանդուխտ կուսի գերեզմանն և մատուռը ամայի դաշտի մէջ լինելով այժմ բոլորովին անմարդաբնակ է:

Թէ Ս. Սանդուխտի և թէ Ս. Թադդէոս առաքեալի վանքը այժմ Հայաստանի Պարսից իշխանութեան մատումն է:

Ս. Սանդուխտ կուսի տօնը Ս. Թադդէոս առաքեալի տօնի հետ ամառն է տօնվում, և բարեպաշտ ժողովուրդը նոցա յիշատակը յարգելու համար այդ օրը կիւրակէ պահելով եկեղեցի է գնում աղօթելու՝ որ Աստուած Ս. Սանդխտի և Ս. առաքեալի

բարեխօսութեամբ նոցա նահատակութեան  
արիւնով հաստատած հայ եկեղեցին հաս-  
տատ պահէ: Ս. Թագդէսօր Հայաստանի  
առաջին քարոզիչը լինելով Հայաստանի ա-  
ռաջին լուսաւորիչն է, իսկ Ս. Սանգուխօր  
առաջին հայ թագաւորազն կոյս նահա-  
տակն է:

\* \*  
\*

### ՀԱՐԱԿԱՆ Ս. ՍԱՆԴԻՏՈՅ ԿՈՒՍԻ.

Դէ. Քե պարծի այսօր սուրբ եկեղեցի ու  
վկայուհի սուրբ Սանգուխօ, որ զհայրա-  
կանն քո թողեր զպաշտօն վասն Քրիստոսի  
հեղեր զարիւն քո սուրբ:

Աշակերտեցար առաքելոյն Թագդէսօի և  
ի հաւատս ճշմարիտս հաստատեցար ոչ  
խառնակելով ընդ հեթանոսական պաշտօնս՝  
արժանի եղեր վերանալ առ Հայր:

Ոք զտիկնութեանն քո թողեր զփառս և  
աստուածային փառօքն զարգարեցար, այ-  
սօր դասակցեալ ընդ զուարթունս երկնից  
վասն մեր առ տէր բարեխօսեալ:

ԳԼ. ԺԱ.

Ս. Գրիգոր լուսաւորիչ (Տոմարն է լիբանան) .

Սուրբ Թադդէոս և Բարդուղիմէոս առաքեալներից յետոյ քրիստոնէութեան դէմ կռապաշտները հալածանքը շարունակեցին Հայաստանում . քրիստոնէութիւնը համարեա ջնջուել էր, եթէ քրիստոնեաներ էլ կային՝ դոքա սարերի մէջ, այրերում՝ թաքուն տեղեր էին ապրում . այս դրութիւնը տևեց մինչև 301 թիւը, երբ Ս. Գրիգոր լուսաւորիչ սկսեց նորից քրիստոնէական հաւատը հաստատել Տրդատ թագաւորին և բոլոր հայերին քրիստոնեայ դարձնելով :

Ս. Գրիգոր լուսաւորիչ Անակ անունով իշխանի որդին էր, Անակ Արշակունի ցեղից և պարթևական ազգից լինելով՝ Հայոց Արշակունի թագաւորներին ազգակից էր : Մինչև 226 թիւը թէ Պարսկաստանի և թէ Հայաստանի թագաւորները Արշակունի էին և միմեանց միշտ օգնում էին, այդ թուա-

կանից Պարսկաստանում սկսեց ուրիշ ցեղ  
թագաւորել. որ Սասանեան էր կոչւում :  
Սասանեան թագաւորը Հայաստանի Արշա-  
կունի թագաւորութիւնն էլ ջնջելու համար  
Անակին ուղարկեց Հայաստան որ Հայոց  
Խոսրով թագաւորին սպանէ :

Անակ իւր Հայաստան գալուն այնպիսի  
ձեռն տուեց, որպէս թէ ինքն Արշակունի  
լինելով Պարսկաստանի Սասանեան թագա-  
ւորից հալածուած փախստական իւր ազ-  
գական Խոսրովին է ապաւինել. Խոսրով էլ,  
միամտաբար մեծ սիրով ընդունեց և իւր  
մօտ էր պահում : Անակ Հայաստան գալիս,  
256 թուին, Արտազ գաւառում Ս. Թագ-  
դէսս առաքեալի նահատակուած տեղը,  
ունեցաւ մի որդի, այդ որդին էր Ս. Գրի-  
գոր լուսաւորիչ :

Անակ և իւր եղբայրը միանգամ Խոսրովի  
հետ որսի գնալիս՝ նորան սպանեցին. իսկ  
հայոց զօրքն իմանալով այս՝ Անակին ամբողջ  
ընտանիքով կոտորեց, ազատուեց Ս. Գրի-  
գորը, որին իւր գայեակը, որ քրիստոնէայ

էր և անուներ Սոփեա, փախցրեց Կեսարեա  
քաղաքը, այնտեղ մեծացրեց քրիստոնէա-  
կան հաւատով: Ս. Գրիգոր Կեսարեայում  
ամուսնացաւ մի քրիստոնեայ Մարիամ անու-  
նով աղջկայ հետ և ունեցաւ երկու որդի  
Վրթանէս և Արիստակէս:

Խոսրովի մահից յետոյ Պարսից Սասանեան  
թագաւորը մտաւ Հայաստան, մեծ կոտո-  
րածներ արեց տիրեց Հայաստանին և Խոս-  
րովի ցեղը ջնջեց, որ այդ ցեղից էլ թա-  
գաւոր չը լինի. բայց ազատուեցին երկու  
մանուկ մինը տղայ միւսը աղջիկ, որոնց  
իրանց խնամակալները փախցրին զանազան  
կողմեր. տղային՝ որի անուան էր Տրդատ՝  
փախցրին Յունաստան, իսկ աղջկան՝ որի  
անուան էր Խոսրովիդուխտ՝ Հայաստանի ա-  
մուր բերդերից մէկը:

Տրդատ Յունաստանում մեծացաւ և  
իրբւ քաջ զինուոր մեծամեծ քաջութիւն-  
ներ կատարեց: Ս. Գրիգոր լսելով Տրդատի  
համբաւը, 280 թուին գնաց նորա մօտ  
ճառայելու, իւր հօր յանցանքը քուէլու

համար, և ամենայն հաւատարմութեամբ  
ծառայելով շատ սիրելի դարձաւ նորան։  
Տրգատ իւր մեծամեծ քաջութիւնների  
համար Հռովմայ կայսրներից մեծամեծ  
պարգևներ ստանալուց յետոյ, զօրք էլ  
ստացաւ, և գալիս էր Հայաստան իւր  
հայրենի երկրին տիրելու, 286 թուին նա  
հասնելով հայաստանի Եկեղեաց գաւառի  
Երիզա աւանը (Երզնւմի նահանգ) որտեղ  
դրուած էին կուռքերը, մեծ զոհեր արեց,  
պատուիրելով որ բոլոր իւր մարդիկն էլ  
զոհեր անեն։ Ս. Գրիգոր այդտեղ յայտ-  
նելով որ ինքն քրիստոնեայ է, հրաժարուեց  
զոհելուց։ Տրգատ լսելով այս տրտմեց և  
յորդորեց Ս. Գրիգորին որ թողնի քրիս-  
տոնէութիւնը, բայց Ս. Գրիգոր երբ չը լսեց,  
բարկացաւ Տրգատ և հրամայեց տանջել այս  
տանջանքներն էլ Ս. Գրիգորին չը վախացրին,  
Տրգատ իմանալով որ Ս. Գրիգոր իւր հօրը  
սպանող Անակի որդին է, սոսկալի տանջանք-  
ներ տալուց յետոյ Արտաշատի մահապարտ-  
ների խոր վիրապը ձգել տուեց։

— Ս. Գրիգոր լուսաւորչի չարչարանքների  
և վիրապ ձգուելու տօնը կատարուամ է  
մեծ պասի մէջ շաբաթ օր: Ս. լուսաւորչի  
պատուի համար այդ օրը սեղանի վարագոյրը  
բացվումէ և բաց պատարագէ լինում: Ժողո-  
վուրդը լցվումէ եկեղեցի և Ս. լուսաւորչի  
յիշատակի համար ջերմեռանդութեամբ  
աղօթում որ նորա բարեխօսութեամբը  
Սատուած հայ եկեղեցին հաստատ պահէ  
իրանց էլ փորձանքներից ազատէ:

---

Գ. Լ. Ժ. Բ.

Ս. Լուսաւորչի (եւ ի վերայէ):

Ս. Գրիգոր 286 թուից մինչև 301 թիւը  
մնաց խոր վիրապում, մի բարի պառաւի  
խոր վիրապի մէջ ձգած օրը մի կտոր հացովը  
ապրելով: Իսկ Տրդատ յաղթելով իւր թըշ-  
նամիններին խաղաղութեամբ կառավարու-  
մէր աշխարհը իբրև կռասպաշտ մարդ քը-

րիստոնէութիւնը հալածելով և քրիստոնեաներին նահատակելով:

301 Թուին Հայաստանի զանազան կողմերը շրջելով իրանց մայրապետ Ս. Գայիանէ կուսի հետ Վաղարշապատ մայրաքաղաքն եկան երեսուն և եօթն կոյսեր, որոնց մէջ իւր գեղեցկութեամբ և իմաստութեամբ նշանաւոր էր Ս. Հռիփսիմէ, և դորա տնունով էլ կոյսերը Հռիփսիմեան կոյսեր էին կոչվում. դորա Վաղարշապատի հնձաններից մէկի մէջ բնակութիւն հաստատելով իրանց ձեռագործի արդիւնքով ապրում էին: Նոցա համբաւը շուտով տարածուեց, և Տրդատ լսելով Ս. Հռիփսիմէի մասին, կամեցաւ նորան կին առնել: Ս. Հռիփսիմէն յայտնելով որ ինքն քրիստոնեայ է և խոտացել է կոյս մնալ՝ մերժեց Տրդատի առաջարկութիւնը: Տրդատ սաստիկ զայրացաւ և հրամայեց բոլոր կոյսերին էլ նահատակել: Կատարուեց թագաւորի հրամանը և նահատակուած կոյսերի մարմինները անթաղ մնացին դաշտի վերայ:

Տրդատ Ա. կոյսերին նահատակել տալուց յետոյ մտատանջութիւնից խելագարուեց և խոզի պէս արմերի մէջ էր թաւալում, խելագարուեցին հայ իշխաններից շատերը: Այս աստուածային մի պատիժ էր որ կրումէին, Խորովիգուխտ երազ տեսաւ թէ խորվիրապի մէջ ձգուած Գրիգորը կարող է բժշկել Տրդատին և այս երազին համեմատ Ա. Գրիգորին խորվիրապից հանեցին, որ եկաւ Տրդատին և իշխաններին բժշկեց, Ա. կոյսերի անթաղ մնացած մարմինները թաղեց և 66 օր քարոզելով, բոլորին սովրեցրեց քրիստոնէական հաւատը:

Հարկաւոր էր նորահաւատներին մկրտել և քահանայ չըկար. Տրդատ, իշխաններն ու ժողովուրդը միաբերան Ա. Գրիգորին հայրապետ ընտրեցին, որ նա էլ քահանաներ և հոգևորականներ պատրաստելով թէ՛ հաւատացեալներին մկրտէ և թէ՛ հոգևոր գործերը հոգայ: Արովհետև Հայաստանում հոգևորական չը կար, այս պատճառով էլ Ա. Գրիգոր գնաց Ահարեա այնտեղ ձեռնա-

դրուեց և 400-ի չափ քահանաներ ու կրօնաւորներ հետն առնելով վերադարձաւ Հայաստան: Ս. Գրիգոր հետը բերեց Ս. Յովհաննէս մկրտչի մատունքը, որտեղ կռատուն կար, կռատունները քանդելով՝ տեղը վանք շինեց, Ս. Յովհաննէս մկրտչի մատունքից այնտեղ թողնելով՝ միաբաններ կարգեց, որ թէ քրիստոնէութիւնը քարոզեն, և թէ այդ վանքերում ուսում և գիտութիւն սորվեցնեն ցանկացողներին, մանաւանդ քրմերի որդիքներից, նոցանից քահանայացուներ պատրաստելով: Ս. Գրիգոր քարոզելով և եկեղեցիներ հաստատելով հասու մինչև Բագրևանդ գաւառը, այդ տեղ տեսաւ Տրդատին և հայ զօրքերին, որոնք Վաղարշապատից երեք օրուայ ճանապարհ ընդ առաջ էին գուրս եկել: Ս. Գրիգոր Տրդատին և հայ զօրքերին Բագրևանդում, Նփրատ գետի մէջ մկրտեց, Տրդատի անունը Յովհաննէս դնելով մկրտութեան տեղը մի վանք շինեց Ս. Յովհաննու անունով, որ այժմ Ուչքիլիսէ է կոչւում:

Ս. Գրիգորի հաստատած վանքերից մինչև այսօր նշանաւոր են Տարօնոյ կամ Մշոյ Ս. Կարապետի և Բագրևանդի Ս. Յովհաննու վանքերը, և երկուսն էլ տաճկաց Հայաստանումն են:

—Ս. Գրիգորի վիրապից դուրս գալու, քարոզելու և հայերին քրիստոնէայ դարձնելու յիշատակը ասովումէ Հոգեգալստից երկու շաբաթ յետոյ՝ շաբաթ օր:

\* \* \*

#### ՀԱՐԱԿԱՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ.

Եւ. Հայաստանեայց հայր հաւատոյ հեղինակ ընտրեալ, ճգնողական վարուք տէր Գրիգորիոս. ի կոճեղս ուրեալ, հոսեալ յարեւել սրունք սրբասնեալ մարմնոյդ, հաստատելով զմեզ ի վէճն հաւատոյ:

Պարակից հոգեղինաց երկնային զօրացն սրբասնեալ զգեստուք տէր Գրիգորիոս, ի խոր վիրապին իջեր ի տղիին ի մէջ դառնաշունչ օձիցն զի փրկեսցես զմեզ ի չար վիշապէն:

Տանն Աստուծոյ տեսանող բարի արժա-  
նացեալ շնորհիւ տէր Քրիզորիոս. կործա-  
նիչ բազնեաց քակտիչ մեհենաց զօրու-  
թեամբ խաչին. քահանայապետ ընտրեալ  
աստուածային յայտնութեամբն:

---

ԳԼ. ԺԳ.

Շողակաւ և հիմարիւ-նի-ն Ս. Էջմիածնի:

Ս. Քրիզոր դեռ կեսարիա ձեռնագրուելու  
չը գնացած, երբ դեռ քարոզում էր քրիս-  
տոնէական հաւատը՝ մի տեսիլք տեսաւ.  
այս տեսիլքի մէջ նա տեսաւ որ Աստուծոյ  
միածին որդին Յիսուս Քրիստոս ոսկի  
ուռն ձեռքին, հրեշտակների բազմու-  
թեամբ իջաւ Աաղարշապատ քաղաքի մէջ,  
ուռով զարկեց գետնին, երկիրը գզըր-  
դաց և անդհդից ձայներ դուրս եկան. այ-  
նուհետեւ մի լուսեղէն կամար բարձրացաւ  
և ձևացրեց մի հոյակապ վանք խաչապսակ

գմբեթով: Ս. Գրիգոր այս տեսիլքը պատմեց  
և որոշեց այդ տեղը շինել լուսեղէն կա-  
մարների ձևացրած վանքը և այդ տեղ  
հաստատել Հայոց հայրապետական աթոռը:  
Երբ ձեռնադրուած. Աեսարիայից վերագար-  
ձաւ Ս. Գրիգոր Տրդատի հետ մի վանք Ս.  
Հախիսիմէի, մի վանք՝ Քայիանէի գերեզ-  
մանների վերայ և մի վանք էլ հնձանքի  
տեղը շինելուց յետոյ 302 թուին ձեռք  
դարկեց և 303 թուին շինեց Յիսուսի ի-  
ջած տեղը տաճարը լուսեղէն կամարների  
ձևով, որ կոչուեց Շողակաթ և Եջմիածին:  
Բոլոր վանքերի վերայ աշխատումէին ան-  
ձամբ Տրդատ, իւր կինն Աշխէն տիկին և  
քոյրն Խոսրովիգուխտ Ս. կոյս:

Ս. Գրիգոր Ս. Եջմիածնի տաճարը շինե-  
լուց, քրիստոնէութիւնը Հայաստան աշ-  
խարհի մէջ հաստատուեց և ամեն տեղ  
քահանաներ ու կրօնաւորներ կարգելուց  
յետոյ կամեցաւ առանձնանալ. Տրդատ և  
հայ իշխանները խնդրեցին որ իւր տեղը  
մէկին հայրապետ կարգէ, և իմանալով որ

Ս. Գրիգոր կեսարեայում երկու օրգի ունի Արիստակէս և Վրթանէս. բերին, և որովհետև Արիստակէսը կրօնաւոր էր ընտրեցին Ս. Գրիգորի տեղ հայրապետ: Գրիգոր լուսաւորիչ Արիստակէսին 318 թուին ձեռնադրելուց յետոյ առանձնացաւ և երբեմն երբեմն գուրս էր գալիս այցելելու իւր հօտին, այնուհետև 30 ամեայ հայրապետական իշխանութիւնից յետոյ բոլորովին առանձնացաւ և անյայտութեան մէջ վախճանուեց. հովիւները մարմինը թաղեցին Յեպուհ լեռան մի այրում որ Ս. Հռիփսիմէի ընկերներից Ս. Մանեա կուսի անունով Մանեայ այր է կոչվում. և այնտեղ երկար ժամանակ անյայտութեան մէջ մնաց նորագերեզմանը:

— Ս. Գրիգոր ամբողջ ազգը քրիստոնէական լուսով լուսաւորելուն համար լուսաւորիչ է կոչվում. Ս. Էջմիածինը՝ էջմիածին է կոչվում՝ որովհետև Յիսուս Աստուծոյ Միածին օրգու իջած տեղն է շինուած, Նոյակաթ է կոչվում՝ որովհետև

Յիսուսի կաթեցրած լուսեղէն շողերի կամարների ձևով է շինուած . Վաղարշապատը այդ ժամանակ Հայաստանի մայրաքաղաքն էր . Յիսուսի իջնելը Վաղարշապատ քաղաքում կընշանակէ իւր հաւատը Հայաստանի կենտրոնում հաստատելը . ոսկի ուռնիշանակում է քրիստոնէական հաւատի սրբութիւնն ու զօրութիւնը . ոսկի ուռնով զարկելով և անդունդը գըրգեցնելով Յիսուս ցոյց տուեց քրիստոնէական հաւատի զօրութիւնը և յաղթութիւնը կռապատութեան դէմ : Լուսեղէն կամարը ցոյց է տալիս թէ Հայաստանի կենտրոնում հաստատուած քրիստոնէական հաւատը իբրև լոյս պէտք է տարածուի իւր շողերով ամբողջ Հայաստանի մէջ և ամբողջ երկիրը լուսաւորէ . լուսոյ շողերն են հոգևորականները , որոնք ստանալով Ս . Էջմիածնի և նորա գահակալ հայրապետի շնորհն , օրհնութիւն Ս . միւռօնի հետ սիրումեն հայ ժողովրդի վերայ նոցա Ս . լուսաւորչի հաւատով զօրացնելով : Քրիստոսի լուսեղէն

պայծառ խաչը, որով պսակուած էր գրմ-  
բէթը, նշանակում է թէ քրիստոսնէու-  
թիւնը թէև 250 տարուց աւելի հալա-  
ծուեց և եկեղեցին անհաւատներից նեղու-  
թիւն կրեց, բայց իւր խոնարհութեամբ  
յաղթելով բոլորին աիրեց աշխարհին և  
այնպէս յայտնի և համարձակ պաշտովում  
է, ինչպէս Ս. խաչը գմբէթի գագաթին  
փայլումէ ամենայն պայծառութեամբ: Ս,  
Էջմիածնի Շողակաթի տօնը և նորա հետն  
էլ օծման տօնը կատարվում է Ս. Աստուա-  
ծածնի վերափոխման շաբաթ օրը. իսկ հիմ-  
նարկութեան տօնը՝ Հոգեգալստից երկու  
շաբաթ յետոյ Ս. Հռիփսիմեանց տօների  
կիւրակէ օրը:

\* \*  
\* \*

ՀԱՐԱԿԱՆ ՀՈՂԱԿԱԹԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Քյ. Ուրախ լեր, սուրբ եկեղեցի, քանզի  
Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց

զքեզ խաչիւն իւրով և զարդարեաց զա-  
մուրս քո սքանչելի փառօք իւրովք:

---

ԳԼ. ԺԴ.

Ս. Սահակ Պարթև, Ս. Մեսրոպ և հայ  
սուրբերի գիտք:

Թէ և Ս. Գրիգոր լուսաւորչի քարսզու-  
թեամբ քրիստոնէութիւնը հաստատուեց  
Հայաստանում և նորա յաջորդների աշխա-  
տանքով պայծառանում էր, բայց հայերը  
սեպհական գիր չունենալով ժամակարգու-  
թիւնը կամ յունարէն էր լինում կամ  
ասորերէն, որով ժողովուրդը ժամերգու-  
թիւնից բան չէր հասկանում:

Ս. Առաքելից յետոյ իւր որդիքն ու  
թուռներն էին ընտրւում հայոց հայրապետ,  
այսպէս էլ 397 թուին հայրապետ ընտրուեց  
նոյն ցեղից Սահակ պարթև: Սահակ պարթև  
առաքիլնի, սուրբ և գիտնական մարդ էր

և ունէր բազմաթիւ աշտկերտներ: Աս շատ  
ցաւում էր որ հայերէն գիր չըկար և հոգս  
էր անում որ հայերէն գիր գտնուի, որպէս  
զի հնար լինի ժամերգութիւնը հայերէն  
դարձնել: Նոյն բարի ցանկութիւնն ունէր և  
մի կրօնաւոր Մեսրոպ անուանով, որ թէև  
ինքըն հայերէն էր թարգմանում ժամեր-  
գութիւնն ու տւետարանը, բայց ցաւում  
էր որ նոյնը չը կարողանալով անել միւս հո-  
գեւորականները, ժողովուրդը զրկվում է  
Առաւօծոյ խօսքը հասկանալուց:

Մեսրոպ Տարօնոյ Հացեկաց գիւղից էր,  
աս սկզբում աշխարհական ծառայութեան  
մէջ էր և թագաւորի ատենագրի, որով-  
հետև լաւ գիտէր յունարէն, ասորերէն  
և պարսկերէն, բայց երբ Ս. Սահակ հայրա-  
պետ դարձաւ, ինքն էլ թողեց աշխարհա-  
կան ծառայութիւնը և կրօնաւոր դարձաւ:

Հայերէն տառեր գտնելու հոգսը տանե-  
լու համար Սահակ պարթևի առաջարկու-  
թեամբ նոյն ժամանակի Հայոց թագաւոր  
Վառամշապուհ ժողով արեց Վաղարշապա-

տու՛մ. այդ ժողովու՛մ վա՛ւամշապսԷ՛ յայտ-  
նեց որ ինքն Միջագետքու՛մ Դանիէլ անու-  
նով մի եպիսկոպոսի մօտ հայերէն հին տա-  
ռեր է տեսել. ժողովի սրոշմամբ գործը  
յանձնուեց Մեսրոպին, որ այդ տառերը  
տեսնի, և այդ տառերով հայերէն գրել  
կարգալը կարգի դնէ. Մեսրոպ գնաց Միջա-  
գետք տեսաւ Դանիէլի տառերը երկու տա-  
րի այդ տառերով կարգալ գրելը կարգի  
դնել աշխատեց, բայց անյաջող, որովհե-  
տե տառերը այնքան չէին, որ հայերէն բո-  
լոր հնչիւնները կարողանային արտայայտել.  
Մեսրոպ դիմեց իւր ժամանակի նշանաւոր  
գիտնականներին, բայց ոչ մի տեղ օգուտ  
չը կարողացաւ տեսնել. նա գնաց Սամսո  
կղզին Հռուփանոս գիտնականի մօտ, սա  
ևս ոչինչ չը կարողացաւ անել. վերջը յոյսը  
մարդկային օգնութիւնից կտրելով՝ Աստու-  
ծուն դիմեց, և Աստուած իւր օգնութիւնը  
հասցրեց. մի անգամ Ս. Մեսրոպ ոչ քնած,  
ոչ արթուն՝ մի տեսիլ տեսաւ, որով նորան  
երևեց մի ձեռք որ ձեւակերպում էր

տառերը որպէս թէ մարդ ձիւնի վերայ  
գրէ. այդ ձևերը տպաւորուեցին Ս. Մես-  
րոպի մտքում և նա արթնելով տախտակի  
վերայ գրոշմեց. այնուհետև Հռուփա-  
նոսի հետ՝ տառերին կանոնաւոր ձև տա-  
լուց յետոյ, սկսեց թարգմանել Ս. գրքից  
Առակաց գիրքը, յաջողութիւնը կատա-  
րեալ էր:

Մեսրոպ ուրախ ուրախ յետ դարձաւ  
դէպի Հայաստան: Այս բանը պատահեց  
406 թուին:

Վաւաճապուհ թագաւորն ու Սահակ  
պարթև հայրապետը Ս. Մեսրոպի յաջողու-  
թեամբ վերագարձը լսելով ընդ առաջ գուրս  
եկան և մեծ հանդիսով բերին Վաղարշա-  
պատ քաղաքը: Սահակ հայրապետ իսկոյն  
ուշիմ, սրամիտ և խելացի աշակերտներ  
ժողովելով սկսեց մի կողմից նոցա հայերէն  
ուսուցանել տալ և մի կողմից էլ սուրբ  
գիրքը թարգմանել: Այս առաջին աշակերտ-  
ներին Սահակ պարթև ուղարկեց ասորւոց  
կողմերը Յգեսիա, Փիւնիկէ և այլն, որոնք

ասորերէնին վարժուելով սկսեցին աջակցել  
Ս. Սահակին և Մեսրոպին Ս. գրքի թարգ-  
մանութեան գործում և կոչուեցին առա-  
ջին թարգմանիչներ:

---

ԳԼ. ԺԵ.

Ս. ՍԱՀԱԿԻ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊԻ ԶԱՆՔԵՐԸ ՀԱՅ  
ԴՊՐՈՒԹԻՒՆԸ ԾԱՂԿԵՑՆԵԼՈՒ.

Ս. Սահակի անկո՞ծն.

Ս. Սահակ պարթև և Ս. Մեսրոպ վաւաճ-  
շտպուհ թագաւորի աջակցութեամբ ամեն  
տեղ դպրոցներ բաց արին ամեն տեղ սկսուեց  
հայերէն ժամերգութիւն. ուրախութեան  
չափ չըկար: Ս. Սահակ պարթև յօրինեց և  
կարգաւորեց եկեղեցւոյ ժամերգութիւնը  
եղանակելով շարականի ութ ձայնը և յօրի-  
նելով շարականներից գլխաւորները. իսկ  
Մեսրոպ որ Մաշտոց էլ էր կոչվում կար-  
գաւորեց հայ եկեղեցւոյ ծիսարանը որ իւր  
անուանով Մաշտոց է կոչվում:

Հայաստանը Պարսից և Յունաց իշխա-

նութեան տակ էր. և դոքա կառավարում էին երկիրը ամեն մէկը իւր մասի վերայ մի մի թագաւոր կարգելով, որ Արշակունի ցեղից էին լինում և մեծ մասամբ եղբայր: Պարսից Հայաստանի թագւորն էր Վաւամշապուհ և այդ մասում արդէն հայ դպրութիւնը բաւական ծաղկել էր. իսկ յոյները իրանց մասնում չէին թողնում հայերէն կարգաւ գրելը մտցնել և հայ գրարոցներ բանալ. Սահակ հայրապետ Ս. Մեսրոպին և իւր թոռն Վարդան Մամիկոնեանին ուղարկեց Կ. Պօլիս և կայսրից հրաման բերելով՝ սկսեց յուսաց բաժնում էլ ժամերգութիւնը հայերէն գարձնել և հայ գրարոցներ բանալ Այդ ժամանակ Վրաց և Աղուանից եկեղեցիքն էլ հայ հայրապետի իշխանութեան տակ էին սեպհական տառեր և կարգաւ գրել չունէին. Մեսրոպ նոցա համար էլ տառեր հնարեց, և նոքա էլ սկսեցին իրանց մայրենի լեզուով կատարել իրանց ժամերգութիւնը:

Ս. Սահակ պարթև իբրև Արշակունի  
Թագաւորներին ցեղակից և խնամի, և  
իբրև լուսաւորչի ցեղից մարդ թէ հայ Թա-  
գաւորների, թէ իշխանների և թէ Ժողո-  
վրդի վերայ մեծ ազդեցութիւն ունէր,  
և իբրև խելացի, գիտուն և ուսումնասէր  
մարդ յարգուած էր թէ պարսից Թագա-  
ւորից և թէ Յունաց կայսրից. ուստի նա  
ոչ միայն հայ եկեղեցական այլ և աշխար-  
հային գործերի համար էլ էր հոգում. այս-  
պէս երբ վախճանուեց Առումշապուհ՝ նա  
գնաց Պարսկաստան և մահապարտների  
բանդից հանել տալով Խոսրով Գ-ին Հայաս-  
տանի վերայ Թագաւոր կարգել տուեց:  
Խոսրով շուտով մեռաւ և նորան յաջոր-  
դեց Արտաշիր, որ սկսեց վատ կեանք վա-  
րել և վատ վարուել նախարարների հետ,  
նոցա հալածելով, իշխանութիւնը ձեռք-  
ներից խլելով և սպանելով. նախարարները  
միաբանեցին և որոշեցին գահընկէց անել  
տալ Արտաշիրն ու կործանել Արշակունի  
Թագաւորութիւնը, ուստի խնդրեցին Ս.

Սահակին, որ նա էլ իրանց հետ միաբանի  
Ս. Սահակ յանդիմանեց նոցա՝ այս չար  
մտադրութեան համար և յորդորեց հնա-  
զանդ լինել իրանց թագաւորին ասե-  
լով. որդեակներ, ձեր նախնիների նման  
տիրանենդ մի լինիք, ձեր բնիկ տէրերին մի  
փոխէք, քանի թագաւորը մերն է, մենք  
կարող ենք փոխել եթէ վատ է և լուր  
դնել. բայց եթէ օտար լինի՝ նոցա գերին  
կը դառնանք. Եւ ես ի՞նչպէս կարող եմ իմ  
ախտացած ոչխարը առողջ գազանի հետ  
փոխել՝ որի առողջութիւնն է մեզ վնասա-  
կար: Նախարարները փոխանակ համոզուե-  
լու՝ պատասխանեցին որովհետեւ դու մեզ  
հետ չը միաբանեցիր Արտաշրին գահընկէց  
անելու, մենք էլ քեզ հայրապետ չենք  
ընդունիլ: Այնուհետեւ նախարարները ծա-  
նրը ամբաստանութիւններ գրեցին Պարսից  
թագաւորին թէ Արտաշրին և թէ Ս. Սա-  
հակի վերայ, յայտնելով որ նոքա Յուդայ  
բարեկամ և Պարսից թշնամի են, ժողովրդ-  
դին Պարսից դէմ գրգռում են և խնդրե-

ցին թէ Արտաշրին գահընկէց անելով Արշա-  
կունի թագաւորութիւնը ոչնչացնել և մի  
պարսիկ նշանակել և թէ Ս. Սահակ պար-  
թեին գահընկէց անել տեղը մի ուրիշին  
հայրապետ կարգել :

Պարսից թագաւորն արգէն այս էր կամե-  
նում : Անմիջապէս Ս. Սահակին էլ Արտա-  
շրին էլ իւր մօտ կանչեց պատասխան տա-  
լու : Արտաշիր հայ նախարարների համար  
ասաց . գործա ի ընէ սովոր են անարգել իրանց  
տէրերին . միշտ ի շխանաւսիս և ախրանենդ  
են եղել : — Պարսից թագաւորը Ս. Սահակի  
ազգական Սուրէնեան պահլաւ մի իշխանի  
միջոցով խոստացաւ Սահակին մեծ պարգե-  
ներ տալ և նորա թոռն Վարդանին Հայոց  
վերայ թագաւոր կարգել եթէ Սահակ նա-  
խարարների կողմն անցնի և չարախօսի Ար-  
տաշրից . բայց Սահակ պատասխանեց . ինչո՞ւ  
փառասիրութեան և իշխանասիրութեան  
համար ընկերիցս չարախօսեմ :

Պարսից թագաւորը տեսնելով որ Սահակ  
հաստատուն է իւր խօսքին և պաշտպանում

է Արտաշրին, բարկացաւ, նորան զահարն-  
կէց անելով՝ պահեց Պարսկաստանում և  
տեղը նշանակեց Սուրմակ անունով մի եկե-  
ղեցականի, իսկ Արտաշրին զահարնկէց անե-  
լով Հայաստանի վերայ Մարզպան (կու-  
սակալ կարգեց մի պարսիկ և Սուրմակի հետ  
ուղարկեց Հայաստան: Այս պատահեց 428  
թուին:

Ս. Սահակ այս ամենը տեսնելուց յետոյ  
մի տեսիլք տեսաւ, որով Աստուած յայտնեց  
նորան Հայաստանի տիրուք վիճակը թէ հո-  
գևորական և թէ քաղաքական մասին, Ար-  
շակունի ցեղից՝ թագաւորու թիւնը և Ս.  
լուսաւորչի ցեղից հայրապետական իշխա-  
նութեան բարձուելովը:

ՊԼ. ԺԶ.

Նախարարներէ զՂԶազը, անարժան հաշտողիսաներ  
և Ս. Սահակի Տահը:

Նախարարները շուտով զՂԶացին իրանց  
արածի վերայ, որովհետև պարսիկ մարզ-  
պանը սկսեց երկրի կարգերը տակն ու վե-  
րայ անել, նախարարներին միմեանց հետ  
կռուացնել և մեծամեծ նեղութիւններ  
տալ. իսկ Սուրմակ իւր անարժան գործե-  
րով զզուացրեց և գայթակղեցրեց բոլորին:  
Նախարարները չըկարողանալով մարզպանին  
բան ասել մի տարուայ մէջ Սուրմակին  
փոխել տուին. միմեանց կարճ ժամանակով  
յաջորդեցին Բըքիշոյ և Շմուէլ ասորիները,  
սորա ևս նոյն գայթակղական գործերով  
բոլորին զզուեցրին. հոգևորականներին  
ու եպիսկոպոսները բոլորովին մոռացան  
իրանց կարգի և աստիճանի բարձրութիւ-  
նը, օրինակ առնելով այս անարժան կաթու-  
ղիկոսները սկսեցին միմեանց վերայ ամբա-

տանութիւներ և քսութիւններ անել մի-  
մեանցից վիճակ յափշտակելու համար: Այս  
բաները տեսնելով նախարարները, նորից  
դիմեցին Ս. Ասհակին խնդրելով որ նա նո-  
րից յանձն առնի վարել կաթուղիկոսական  
խշխանութիւնը, իսկ նա միայն յանձն ա-  
ռաւ հոգևորական գործերը կառավարել  
և հոգևորական գործերին հսկել և այս-  
պէս 432 թուին վերագործաւ Պարսկաս-  
տանից Հայաստան:

Ս. Ասհակ նախ քան Հայաստան գալը,  
Պարսից թագաւորից հրաման հանեց Մարզ-  
պանի վերայ, որ նա իրաւունք չունենայ  
հայ նախարարական կարգերը փոփոխել և  
զրկուած բանգարկուած նախարարներն  
ել ազատուելով իրանց տեղն ստանան:

Ս. Ասհակ վերագործաւնալով Հայաստան  
սկսեց եկեղեցական բարեկարգութեան վե-  
րայ հսկել անգրանիկ թարգմանչիների հետ  
Ս. գրքի և այլ եկեղեցական գրքերի թարգ-  
մանութեամբ զբաղուելով մի ուրիշ կարգ  
ել ու շխմի աշակերտներից ուղարկեց

4. պօլիս, Աթէնք և Աղէքսանդրիա սւսման  
մէջ կատարելագործուելու համար և վա-  
ղարշապատի կաթուղիկէում թողնելով Ս.  
Մեսրոպին ինքն սկսեց այցելու թեամբ շրջել  
Հայաստանի ամեն կողմերը, վերջապէս  
Բագրևանդայ Ս. Յովհաննու վանքում դա-  
դար առաւ և 51 տարի հայրապետական  
իշխանութիւնը ամենայն արդիւնաւորու-  
թեամբ վարելուց յետոյ Բագրևանդայ Բլուր  
գիւղում 438 թուին վախճանուեց և թա-  
ղուեց Տարօնոյ Աշտիշատ անունով:

\* \* \*

### ՀԱՐԱԿԱՆ Ս. ՍԱՀԱԿԱՅ.

ԳԷ. Որ յարմատոց հարցն սրբոց մեզ գա-  
ւաղան բղխեցեր. ըզ Իսահակ սուրբ հայրա-  
պետն եկայք վերապատուեսցուք:

Որ ղխաւարն անգիտութեան Հայաստա-  
նեայցս լուծեր. ղիմաստութեան ծագեալ  
զլոյս սովաւ որդւոց թորգոմայ:

Որ ղհանդերձեալ խորհուրդ քո, տէր,

տեսլեամք սրբոյն ծանուցեր յիշատակի սն-  
րա ընկալ զտօնողացս զաղաչանս:

ԳԼ. ԺԷ.

Թարգմանիչներ.

Ս. Սահակի մահից յետոյ նորան յաջոր-  
դեց Ս. Մեսրոպ, որ վեց ամիս միայն վա-  
րեց իշխանութիւն և վախճանուելով թա-  
ղուեց Օշական գիւղում, որի գերեզմանի  
վերայ փառաւոր եկեղեցի է շինած:

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ երկու կարգ ա-  
շակերաներ ունեցան, առաջին կարգը, որ  
կոչւում է առաջին Թարգմանիչներ, Ս. Սահա-  
կի և Մեսրոպի հսկողութեան տակ աշխա-  
տեցին հայ դպրութեան հայ դպրոցների և  
հայերէն թարգմանութեան մէջ. առաջին  
անգամ սոքա թարգմանեցին ասորերէնից  
Ս. գիրքը և շատերը Հայաստանի զանազան  
գաւառներում եպիսկոպոս կարգուեցին.  
սոցանից էր Յովսէփ Վայոց ձորեցին (Ղարա-  
լագեազ) որ Ս. Մեսրոպին յաջորդեց նորա

յանձնարարութեամբ: Սահակ և Մեսրոպ  
Թարգմանական գործը աւելի ևս կարգի  
դնելու և աւելի ևս պատրաստուած մար-  
դիկներով ուսման գործը յառաջ վարելու  
համար իրանց ուշիմ աշակերտներէց մի  
կարգ էլ ուրիշ երկիրներ ուղարկեցին. բայց  
սոցա վերագարձը չը տեսան. այս երկրորդ  
կարգը կոչվում է կրտսեր Թարգմանիչներ:  
Կրտսեր Թարգմանիչները վերագառնալով  
Հայտատան՝ տեսան հայ Թագաւորութիւնը  
կործանուած և տեղը մի պարսիկ մարդ-  
պան. Ս. Սահակին և Ս. Մեսրոպին վախ-  
ճանուած, իսկ եկեղեցական գործերը Սուր-  
մակի, Բրքիշոյի և Շմուէլի երեսից աակն  
ու վերայ եղած և ամեն կարգ խանգարուած.  
ինչ յուսով որ վերագարձել էին այդ յոյսերը  
բոլորովին ոչնչացած տեսնելով յուսահատ-  
ուեցին: Նոցա ուսումն յարգող չը կար,  
և բացի սորանից հալածանքի էին ենթարկ-  
վում. և չը կարողանալով միասին գործել  
ցրուեցին ամեն մինը մի մի կողմ և սկսեցին  
ամէն մինը առանձին գործել:

Թէ կրտսեր և թէ առաջին թարգմանիչ-  
ները եկեղեցու պայծառութեան, հայ դըպ-  
րութեան ճոխանալու վերայ հոգալով՝ եկե-  
ղեցու և ազգի հաստատութեան համար էլ  
աշխատեցին, մանաւանդ այն ժամանակ-  
երբ պարսից թագաւորները հայ թագաւո-  
րութիւնը վերջացնելուց յետոյ հայ եկեղե-  
ցին էլ կամենում էին վերջացնել որպէս զի  
հայերին բոլորովին իրանց հետ միացնեն,  
այդ ժամանակ արդէն թարգմանիչները  
պաշտպանեցին հայ եկեղեցին քաջութեամբ  
կռուելով և իրանց քաջութեամբ ժողո-  
վըրդին էլ ոգևորելով,  
Հայ թարգմանիչներին, որոնցից ոմանք  
եպիսոպոսս, ոմանք վարդապետ և ոմանք էլ  
քահանայ էին, օգնում էին հայ նախարար-  
ները, որովհետև սոցանից շատերը Ս. Սա-  
հակի և Ս. Մեսրոպի աշակերտներն ու  
թարգմանիչների ընկերներն էին, թարգմա-  
նիչների ժամանակը կոչվում է ոսկէ դար,  
այդ դարի մէջ հայ դըպրութիւնը սկսուեց,  
զարգացաւ ճոխացաւ և կատարելութեան

Հասաւ. մինչև այդ դարը Հայերը պատմութիւն չունէին. այդ դարում թարգմանիչներէց Մովսէս Խորենացին գրեց Հայոց պատմութիւնը:

— Արուհեակ. Ս. Սահակ և Մեսրոպ և նոցա աշակերտներն, որ թարգմանիչ են կոչվում մեր եկեղեցուն և մեր ազգին այնքան բարիք են արել, եկեղեցին և ազգն էլ նոցա յիշատակը ամուսնում է յատուկ շարականներով:

\* \* \*

ՀԱՐԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՁԱՅ.

այ. Ար զգիտութիւն քո զերկնային և զհողեր զիմաստութիւն առատապէս ծաւալեցեր յեկեղեցիս Հայաստանեայցի ձեռն սրբոց թարգմանչաց. ազաչանօք սոցա ողորմեա մեզ Սասունաճ:



ԳԼ. ԺԸ.

Ս. ՂԱՆՈՂԵԱՆՔ

Ս. ՂԱՆՈՂԵԱՆՔ Ս. ՍԱՀԱԿ ԱՊԱՐԹԵԼԻ ԵՎ Ս. ՄԵՍՐՈՍԻ ԱՉԱԿԵՐԱՎ ՀՈԳԼՈՐԱԿԱՆՆԵՐՆ ԷՆԻՆ, որ ՂԱՆՈՂ ԵՐԷՅԻ ԱՆՈՒՆՈՎ ՂԱՆՈՂԵԱՆՔ ԵՆԻ ԿՈՇՎՈՒՄ, ԵՎ ԿՈՔԱ ՆՉԱՆԱԼՈՐ ԵՆԻ ԿՅՆ ԲԱՆՈՎ որ Հայ Եկեղեցին պաշտպանեցին քաջութեամբ նահատակուելով:

Պարսից Յազկերտ թագաւորը 450 թուին հրաման գրեց որ հայերը պարսից կրակապաշտ կրօնն ընդունեն: Ասյոց ձորեցի Յովսէփ կաթողիկոսը ժողովելով հայ նախարարներին և իշխաններին, հայ եպիսկոպոսներին և հոգևորականներին, պատասխանեց թագաւորին որ հայերը լինելով քրիստոնէայ և քրիստոնէական հաւատի ճշմարտութիւնը հասկանալուց յետոյ չեն կարող թողնել այդ հաւատը և կրակապաշտ գառնալ, պաշտել կրակին:

Թագաւորը սաստիկ բարկացաւ այս պատասխանը ընդունելով, ուստի բոլոր հայ

Նախարարներին իւր մօտ կանչեց, և բոլորին էլ բաճառ դրեց յայտնելով՝ որ եթէ կրակապաշտ չը գառնան՝ բոլորին էլ պէտք է սպանէ: Նախարարները մտածելով որ եթէ չընդունեն թագաւորի առաջարկութիւնը, պէտք է սպանուեն և երկիրը անտէր մընալով պէտք է կրակապաշտ գառնայ, լաւ համարեցին երեսանց ընդունել թագաւորի հրամանը մինչև Հայաստան հասնելը և այնուհետև ազատութեամբ պաշտպանել եկեղեցին ու ազգը, այդպէս էլ արին: Թագաւորը ուրախացաւ և բազմաթիւ մոգեր էլ նախարարների հետ գնելով վերադարձրեց Հայաստան: Մոգերը կարծում էին թէ հայերին հեշտութեամբ կը կարողանան կրակապաշտ դարձնել, ուստի և դեռ Հայաստանի սահմանին չը հասած՝ վիճակ էին ձգում թէ՛ որ գաւառը ում բաժին կընկնի:

Նախարարների ուրացութեան և մոգերի Հայաստան գալու լուրը շուտով հասցրին Յովսէփ կաթողիկոսին և նա իսկոյն ուր եպիսկոպոս չը կար եպիսկոպոս ուղարկեց և

բոլորին էլ այսպիսի պատուէր տուեց, որ  
յորդորեն ժողովրդին պաշտպանել իրանց  
հաւատք իրաւունք տալով հաւատուրաց  
ազգականներին սպանել, չը խնայելով ոչ  
հօրը, ոչ մօրը, ոչ եղբօրը, ոչ կնոջը և ոչ  
որդուն:

Յովսէփի այս պատուէրով և հոգևորա-  
կանների յորդորներով քաջալերուած ժո-  
ղովուրդը սկսեց եկեղեցին պաշտպանելու  
պատրաստուել. բոլորը երեսները դարձրին  
հաւատուրաց նախարարներից, Յովսէփն էլ  
մի խիստ յանդիմանութիւն գրեց նոցա:  
Նախարարները որ երեսանց էին ընդունել  
կրակապաշտութիւնը, իրանց երկրում ի-  
րանց հարազատներից էլ այսպիսի անար-  
գանք տեսնելով էլ չը կարողացան դիմանալ,  
թողին կրակապաշտութիւնը, դաւանեցին  
քրիստոնէութիւնը և աւետարանի վերայ  
երգուեցին մինչև յետին կաթիլը արիւնի  
պաշտպանել քրիստոնէութիւնը:

Յազկերտ թագաւորը երբ իմացաւ այս  
սաստիկ բարկացաւ և մեծ բազմութեամբ

զօրք ուղարկեց Հայաստան: Հայ հոգևորա-  
կանները որ Յովսէփի հրամանին և Աւանդ-  
երէցի օրինակին հետևելով, արդէն կրա-  
կատուները քանդել ու քանդում էին,  
մոգերին հալածել ու հալածում էին, սիրտ  
առնին ժողովրդին չըմբռնելով: Հայոց զօ-  
րավարն էր Ս. Սահակի թոռն և թարգմա-  
նիչների ընկեր Վարդան Մամիկոնեան, իսկ  
Մարզպանը՝ Վասակ սիւնին: Վարդան Մա-  
միկոնեան հետևելով Ս. Յովսէփի և Աւանդ-  
երէցի յորդորին պատրաստեց Հայոց զօր-  
քերը դիմագրելու պարսիկներին, իսկ Վա-  
սակ, որ որտու պարսից կողմն էր, թէպէտ  
արաքուստ իրան եկեղեցու պաշտօնան էր  
ձեւացնում, բայց ներքուստ ուրիշ կերպ էր  
աշխատում: Ս. Յովսէփ և Աւանդ երէց Հայ  
հոգևորականների հետ խոսք և անկողարան  
առած՝ զօրքի առաջն ընկան և զօրքի մէջ  
էին միշտ: Նախ քան պատերազմ սկսելը Ս.  
Յովսէփի հրամանով Աւանդ մի քարոզ խօ-  
սեց զօրքերին, այնուհետև Ս. պատարագ  
մատուցուեց. հոգևորականները հաղորդե-

ցին զօրքերին և շուսարացին սկսուեց պատերազմը. կռուի ժամանակ Վասակ մի քանի ուրացող նախարարների հետ արդէն պարսից կողմն էր անցել. կռիւը պատահեց Աւարայրի դաշտում՝ Տղմուտ գետի մօտ: Պատերազմ տեւեց մինչև երեկոյ և հայերը համարեա պէտք է յաղթէին և այդ ժամանակ Վարդան սպանուեց. զօրքը առանց առաջնորդի մնաց և սկսեց ցրուել: Պարսիկները երեքպատիկ կորուստ ունեցան, բայց որովհետև հայ զօրքը անառաջնորդ մնալով ցրուել էր տիրեցին անտէր երկրին, սկսեցին ստիպել, որ հաւատուրաց լինին, ընդդիմացողներին սպանում էին այս պատճառով բոլորը թողնելով քաղաքները գիւղերն ու աւանները քաշուեցին լեռները և անմատչելի տեղերն էին ապրում ամենայն տեսակ նեղութիւն կրելով: Պարսիկները բռնեցին Յովսէփին և Աւոնդին և ուրիշ, նշանաւոր հոգևորականներին և ուղարկեցին Պարսկաստան, որովհետև նոքա յայտնեցին որ թագաւորին յայտնե-

լու բաներ ունէին. թագաւորը նոցա հար-  
ցաքննել տուեց և իմանալով որ բոլոր չա-  
րութիւնների պատճառը Վասակն է, որ  
կեղծաւորութեամբ թէ հայերին և թէ  
պարսիկներին է խաբել, մեծ անարգութեամբ  
մահապարտների բանտը ձգել տուեց, իսկ  
Ս. Յովսէփին, Աւոնդին և միւս հոգեւո-  
րականներին սպանել հրամայեց, որովհետեւ  
նոքա կրակատուներ էին քանդել և մոգ-  
պետներին հալածել էին:

— Նահատակուած հոգեւորականները Աւ-  
ւոնդեանք են կոչւում նորա համար, որ  
ամենից ճարտարը, սրտուոր և ամեն գէպ-  
քում երեւողը Աւոնդն էր: Աւոնդեանց  
նահատակութեան տօնը կատարւում է մեծ  
բարեկենդանի վերջին շաբթի երեքշաբթի  
օրը յատուկ շարականներով:

ՀԱՐԱԿԱՆ Ս. ԱՆՈՆԴԵԱՆՑ.

Էջ. Որք եկեալ հասեալ լինէին սեւագունդ  
զօրն պարսից, զի յափշտակեացեն զառաջ

նորդս Հայաստանեայց զսուրբ Աւան-  
դեանս: զս խոյանանց զս զս զս զս զս զս  
Որք չուեալ գնացեալք լինէին ի պալատն  
անորէն թագաւորին, զի վկայեսցին ճշ-  
մարիտ սուրբ երրորդու թեան, զսուրբ Աւ-  
անդեանքն:

\* \* \*

Լուսաւորիչն ամենեցուն Աւանդիէ  
սուրբ վարդապետն խոհական մեծ խորհր-  
դով խրատեալ լցոյց զաշակերտեալսն. ծա-  
ւալեալ զչոյս գիտութեան յողիս արանց  
կատարելոց, կամուոր յօժարութեամբ կա-  
տարեցան սիրով վրիչին:

ԳԼ. ԺԹ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Յաւարչական կազմութիւն.

Ս. Աւանդեանց խոհատակութիւնից յե-  
տոյ Հայաստանեայց եկեղեցւոյ հայրադե-

տական ավթոռը Ս. Էջմիածնից փոխադրուեց  
Գուհն. որովհետև Հայաստանի կառավա-  
րիչները այդ տեղ էին նստում, յետոյ փո-  
խադրուեց Շիրակ (Արգենայ, Անի), Հռոմ-  
կրչայ և Սիս. այդ ժամանակ Հայաստանը  
բռնութեան տակ էր և եկեղեցին հալա-  
ծանքի ենթակայ, և ավթոռ այնտեղ էր  
փոխադրում, ուր կարող է թիչ շատ ա-  
զատութիւն ունենալով՝ հսկել ներութեան  
մէջ եղողների վերայ: Երբ Շիրակայ Բագ-  
րատունի թագաւորութիւնից յետոյ, ըս-  
կրեց Կիլիկիայ Ռուբինեանց թագաւորու-  
թիւնը Հայրապետական ավթոռը Կիլիկեա  
փոխադրուեց, բայց երբ Կիլիկիայից էլ  
վերջացաւ թագաւորութիւնը, Ս. Էջմիած-  
նում 1440 թուին մեծ ժողով զումար-  
ուեց և այդ ժողովի մէջ որոշուեց որ հայ-  
րապետական ավթոռը բուն Հայաստանի մէջ  
հաստատուի. այնտեղ, ուր հաստատել էր  
Ս. Լուսաւորիչ և այն օրից Հայրապետա-  
կան ավթոռը Ս. Էջմիածնումն է և Ս. Էջ-  
միածինը մայր ավթոռն է բոլոր հայերի:

Հայ եկեղեցին այժմ հետևեալ Հոգևոր  
բաղանդներէ դասակարգերն ունի, որով կա-  
ռավարւում է եկեղեցին:

Ս. Ս. Էջմիածնի Մայր Աթոռում նստող  
Ս. լուսաւորչի յաջորդ ամենայն Հայոց կա-  
թողիկոս և ծայրագոյն պատրիարքը, որ  
Հայ եկեղեցւոյ գլուխն է և եկեղեցին կա-  
ռավարում է կրօնական մեծ խնդիրներին  
կամ անձամբ կամ իւր նախագահութեամբ  
կազմած ազգային ժողովով. առանց մէկից  
կախումն ունենալու՝ կառավարում է եկե-  
ղեցին, օրհնում է Ս. Միւռոնը և ձեռնա-  
գրքում է եպիսկոպոսներ: Որովհետև այժմ  
հայերը երեք տէրութեան իշխանութեան  
տակ են որ են. Ռուս, Տաճիկ և Պարսիկ.  
Ինքն Էջմիածին իբրև Մայր Աթոռ և Էջ-  
միածնի գահակալ ընդհանրական կաթո-  
ղիկոսը լինելով ուսաց Հայաստանում՝  
Ռուսաստանի և Պարսկաստանի Հայոց հս-  
գևոր գործերը անմիջական իշխանութեամբ  
է հոգում, և առաջնորդներ կարգում, իսկ  
Տաճկաստանինը իւր փոխանորդի միջոցով

որ է Կ. Պօլսոյ պատրիարքը: Եւ յ. Երուսաղէմի և Կ. Պօլսոյ պատրիարք-  
ներ, որոնք ձեռնադրուելով ընդհանրական  
կամ Ս. Էջմիածնի գահակալ կաթողիկո-  
սից՝ առաջինը իրրեւ Էջմիածնի կաթողի-  
կոսի փոխանորդ կառավարում է Պաղեստի-  
նի հայ եկեղեցիքը Ս. Էջմիածնում ձեռնա-  
դրուած եպիսկոպոսներով, և իւր գործոց  
հաշիւը ներկայացնում է Կ. Պօլսոյ պատրի-  
արքարանին և պատասխանատու է վերջի-  
նիս: Կ. Պօլսոյ պատրիարքը լինելով Էջմի-  
ածնի եպիսկոպոս Էջմիածնի գահակալ կա-  
թողիկոսի կողմից փոխանորդաբար կառա-  
վարում է բոլոր Տաճկաստանի հայ եկեղեցիքը  
վարչական մասին՝ անկախ կերպով, իսկ կրօ-  
նական խնդիրներում Էջմիածնի գահակալ  
կաթողիկոսից հրահանգուելով, Էջմիած-  
նում ձեռնադրուած եպիսկոպոսներ առաջ-  
նորդ կարգելով և Ս. Էջմիածնից Ս. Միւ-  
ռոն ստանալով և բաշխելով իւր հովու-  
թեան յանձնուած եկեղեցիներին:  
Գ. Սոյ և Աղթամարի կաթողիկոսներ,

որոնք մի մի մեծ վիճակաւ որներ են իրանց  
թեւերում, 4. Պօլսոյ պատրիարքի իրաւա-  
սու թեան տակ, միայն իրաւունք ունին  
իրանց վիճակի համար 5. Միւռոն օրհնել  
և պատրիարքի գիտութեամբ, Եպիսկոպոս  
ձեռնադրել, 6. Սրբեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ,  
որոնք կամ կաթուղիկոսի և կամ պատ-  
րիարքի կողմից նշանակուած են վիճակնե-  
րի առաջնորդ լինել, 7. Ռուսաստանում փոխանորդներ, որոնք  
առաջնորդի կողմից ներկայացուցիչ և  
փոխանորդ են առաջնորդական թեմի գա-  
ւառական որոշ քաղաքներում և նորա վի-  
ճակում, փոխանորդ լինում են եպիսկո-  
պոսներ կամ վարդապետներ, 8. Քործակալներ կամ քարեկորգիչներ,  
որոնք գիւղերում և վարքիկ քաղաքնե-  
րում կատարում են հոգևոր իշխանու-  
թեան յանձնարարութիւնները և հսկում  
են եկեղեցիներին ու եկեղեցականներին բա-  
րեկարգութեան վերայ, 9. Գործակալ կամ

բարեկարգիչ լինում են ընդհանրապէս քա-  
հանաները:

1. Հոգևորական հասարակութիւններ  
Ռուսաստանում.

ա. Ս. Էջմիածնում Սինօզ, ծայրագոյն  
պատրիարք կաթողիկոսի նախագահու-  
թեամբ և ութ անդամների բաղկացու-  
թեամբ կառավարում է Ռուսաստանի եկե-  
ղեցական վարչական գործերը: Անդամները  
լինում են արքեպիսկոպոս, եպիսկոպոս և  
վարդապետ:

բ. Կոնստանտնուպոլիսի Ռուսաստանի վեց վի-  
ճակներում նախագահութեամբ թեմական  
առաջնորդի և բաղկացութեամբ չորս ան-  
դամների հոգում է վիճակային վարչական  
գործերը պատասխանատուութեամբ Սինօ-  
զի առաջ. անդամներից մէկը վարդապետ  
կամ աւագ քահանայ իսկ մնացեալը քա-  
հանայք:

գ. Հոգևոր կառավարութիւնն նշանակեալ

տեղերսւմ իւրաքանչիւր թեմի մէջ նախագահութեամբ յաջորդի կամ աւագ քահանայի և բաղկացութեամբ երկու անդամների հսկում է իւր իրաւասութեան տակ եղած եկեղեցական գործերին և հասուցանում է ի գիտութիւն և ի տնօրէնութիւն կոնսիստորեայի, անդամները քահանայ են լինում:

2. Հագեորական հասարակութիւններ  
Տաճկաստանում.

ա. Ազգային ընդհանուր ժողով 4. Պօլսում. օրէնսդիր և բարձրագոյն հաստատութիւն նախագահութեամբ պատրիարքի, տոեհապետութեամբ մի աշխարհականի և բաղկացութեամբ 120 անդամոց:

1. Կրօնական ժողով նախագահութեամբ պատրիարքի և տոեհապետութեամբ մի եպիսկոպոսի և հոգևորական անդամոց բաղկացութեամբ, որ հոգևորական գործերն է տնօրինում:

2. Քաղաքական ժողով, դարձեալ նախագահութեամբ պատրիարքի և աշխարհական

ատենապետի և աշխարհական անդամոց՝ որ  
աշխարհական գործերն է հոգում :

3. Խառն ժողով. կրօնական և քաղաքա-  
կան ժողովներին միասին գումարումն :

Բ. Գաւառական ժողով գաւառներում  
նոյն կազմակերպութեամբ ինչ որ Կ. Պօլ-  
սոյ ազգային ժողովն է իւր ստորաբաժ-  
նումներով, միայն գաւառներում պատրի-  
արքին փոխարինում է առաջնորդը :

3. Հոգևորական հասարակութիւններ

Պարսկաստանում :

Պարսկաստանը ունի երկու առաջնորդա-  
կան թեմ, մինը Ատրպատականի և միւրը  
Պարսկաստանի և Հնդկաստանի : Առաջինի  
աթոռը առաջ Ս. Թադդէոս առաքելոյ  
վանքն էր, բայց այժմ Թաւրիզ. իսկ  
երկրորդի աթոռը Սպահան : Երկու առաջ-  
նորդներն էլ իրանց գործունէութեան մէջ  
ազատ են ստորաբաժնում որոշուած չը  
կան. կառավարում են իրանց թեմերը

ինչպէս կամենում են. բայց պատասխանա-  
տու են էջմիածնի գահակալ կաթողիկոսի  
առաջ:

**ՅԱԻԵԼՈՒԱԾՔ.**

Ս. Ս. Խաչ. ( Գիւր Ս. Խաչին ).

Մինչև Յիսուս Քրիստոսի խաչուիլը խաչը  
սպանութեան գործիք էր և ատելի. ինչպէս  
կախաղանք, բայց Յիսուս երբ խաչուելով  
փրկեց մարդկան ազգը, խաչը փրկութեան  
գործիք դառնալով՝ պաշտելի դարձաւ:

Յիսուսի խաչելութիւնից յետոյ խաչը  
Գողգոթայի վերայ ընկած մնաց. որքան խա-  
չի սէրը հաւատացեալների մէջ մեծանում  
էր, այնքան էլ հրէաներն ու հեթանոսները  
սկսեցին խաչն անարգել, ուստի և դռա  
խաչը մի փոսի մէջ ձգեցին և ախրով ծած-  
կեցին: Քրիստոսի խաչը անյայտացաւ և  
այդպէս մնաց մինչև Քրիստոսի 300 թիւը,  
քանի որ քրիստոնէութիւնը հալածվում էր,

ոչ սք չէր համար ձախում քրիստոսի խաչը  
գտնելու վերայ մտածել. բայց այդ թուին  
քրիստոնեաները այնքան բազմացել էին, որ  
էլ այնքան երկիւղ չըկար, մինչև անգամ  
թագաւորները իրանց ամբողջ ազգով քրիս-  
տոնեայ էին դարձել, ինչպէս Տրդատ թա-  
գաւորը և այլն:

Հռովմայեցւոյ Աստուանդիանոս կայսրը  
կռապաշտ էր և իւր զօրքի մէջ բազմաթիւ  
քրիստոնեայ զինուորներ ունէր. սա կա-  
մենում էր իւր թշնամիներին յաղթել, և  
մտածում էր և ահա այդ ժամանակ մի տե-  
սիւք տեսաւ որի մէջ Աստուած նորան  
յայտնեց որ խաչով կարող է յաղթել և ցոյց  
տալով խաչը ասաց. սորանով կը յաղթես:  
Աստուանդիանոս իսկոյն իւր զրոշակների  
վերայ խաչի նշանը դրեց, և ասաց. եթէ  
սորանով յաղթեմ, քրիստոնեայ կը դառնամ,  
և արգարե իւր քրիստոնեայ զինուորների  
անձնանուէր քաջութեամբ յաղթեց թշնա-  
միներին, ինքն քրիստոնեայ դարձաւ և  
հրաման տուեց որ բոլորն էլ անարգել

քրիստոնեայ գառնան և քրիստոնէութիւնը պաշտեն:

Ս. յսպէս երբ խաչի նշանը յանթող հանդիսացաւ՝ սկսեցին Յիսուսի իսկական խաչը որոնել և Կոստանդիանոսի մայր Հեղինէ թագուհին 327 թուին գնաց Երուսաղէմ՝ հարցաքննելով գտաւ խաչի տեղը և խաչը, և մի փառաւոր տու փի մէջ դրեց. Գողգոթայի վերայ մի մեծ եկեղեցի շինեց և Ս. խաչն էլ այդ տեղ դրեց:

— 11. խաչի գտնելու յիշատակը Ս. եկեղեցին տօնում է Հոկտեմբեր ամսի վերջին օրերին:

\* \* \*

( Երևան-Տ. Ս. Խաչին. )

Աստուած կամեցաւ Քրիստոսի սուրբ խաչը աւելի ևս փառաւորել, և խաչի փառաւորութեամբ Քրիստոնեաների հաւատը հաստատել ու նոր հաւատացեալների թիւը բազմացնել. ուստի 351 թուին մայիս ամսի մէջ Յիսուսի խաչի լուսեղէն նշանը Չի-

Թե՛նեայ սարից մինչև Երուսաղէմ գողգոթա  
երկնքի վերայ ցոլացած երևեց, և բոլոր  
Երուսաղէմացիք տեսան, և փառք տուին  
Աստուծուն, շատ հեթանոսներ և հրէա-  
ներ էլ քրիստոնեայ դարձան: Այս երևոյթը  
բաւական երկար ժամանակ տևեց. և Երու-  
սաղէմի կիւրեղ եպիսկոպոսն էլ յայտնեց  
գրով Կոստանդ կայսրին:

—Ս. Խաչի երևումն տօնվում է Զատիկի  
հինգերորդ կիւրակէին:

\* \* \*

( Խաչվերաց. )

614 Թուին Պարսից Խոսրով թագաւորը  
Երուսաղէմն առաւ և Քրիստոսի սուրբ  
խաչը գերի տարաւ. Խոսրով Ս. խաչը դրեց  
իւր տէրութեան գանձարանի մէջ: Քրիս-  
տոնեայք մեծ նախատինք էին համարում  
այս և շատ տրտում էին: 629 Թուին Յու-  
նաց Հերակլ կայսրը յաղթեց Խոսրովին և  
քրիստոսի խաչը գերութիւնից ազատեց.

մինչև այդ ժամանակ Քրիստոսի խաչը ամբողջ էր, այնուհետև մաս մաս բաժանեցին և բաժանեցին հաւատացեալ եկեղեցիներին, որ բոլորն էլ իրանց փափագը առնեն: Յիսուսի խաչը միշտ պատուած ու փառաւորուած էր, բայց գերութիւնից դառնալուց յետոյ եկեղեցին աօն հաստատեց և աւելի ևս փառաւոր կացուցանելու համար ամեն տարի այդ տօնին, որ Սեպտեմբերի մէջ է լինում, խաչը վերացնելով ցոյց են տալիս ժողովրդին և վերացած խաչով օրհնում աշխարհի ամեն կողմերը: Այս տօնը կոչվում է խաչվերաց:

— Խաչվերացի տօնը Յիսուսի խաչի փառաւորութեան տօնն է, և խաչվերաց նշանակում է վերացած, բարձրացած, փառաւորուած խաչ:

\* \* \*

### ՀԱՐԱԿԱՆ Ս. ԽԱՉԻ.

Քչ. Ապաւինեցաք ի խաչ քո, արարիչ յաւիտենից, որ ետուր մեզ պահապան

յաղթող ընդդէմ թշնամոյն աղաչեմք սուլաւ  
փրկիչ, պահպանեա՛ զանձինս մեր:

\* \* \*

Բ. Երգք Ս. պատարագի.

Պ. Խորհուրդ խորին անհաս անսկիզբն  
որ զարգարեցեր զվերին պետութիւնդ, ի  
յառագաստ անմատոյց լուսոյն, գերապանծ  
փառօք զդասս հրեզիկաց: Անճառահրաշ  
զօրութեամբ ստեղծեր զԱդամ պատկեր  
տիրական, և նազելի փառօք զգետտաւորե-  
ցեր, ի գրախտն ադենին տեղի բերկրանաց:  
Չարչարանօք քո սուրբ միածնիդ նորոգե-  
ցան արարածք ամենայն, և վերստին մար-  
դըն անմահացաւ, զարգարեալ ի զգետտ  
անկողոպտելի: Անձրեւածին բաժակ հրա-  
հասան որ հեղար յառաքեալսն ի սուրբ վեր-  
նատանն. հեղ և ի մեզ Հոգիդ Սուրբ Աս-  
տուած, ընդ պատմուճանի զքո զիմաս-  
տութիւն: Տան քում վայելէ սրբութիւն որ  
զգեցար զվայելչութիւն, սրբութիւն վա-

ուսց ընդ մէջ քո ածեալ, պատեա զմէջս  
մեր ճշմարտութեամբ: Որ զարարչագործ  
բազուկս քո տարածեցեր ընդդէմ աստե-  
ղաց. հաստատեա զբազուկս մեր կարողու-  
թեամբ, համբարձմամբ ձեռաց առ քեզ  
միջնորդիլ: Ի հիւսմամբ թագ ի գլուխ պա-  
տեացես զմիտս և զգայարանս. խաչանիշ  
ուրարամբ ըստ Ա. հարովնի, ծաղկեալ յոս-  
կեթեւ ի զարդ խորանին: Բամից բոլորից  
տիրապէս աստուածայետական. նափորտա-  
պատ սիրով զմեզ զգեստաւորեցեր քում  
սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր: Թագա-  
ւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պա-  
հեա. և զերկրպագուս անուանդ քում  
պահեա ի խաղաղութեան:

---

Գ. Եկեղեցական զգեստներ (պէս խորհրդապետաց):

1. Ժ... շապիկ. մաքրութեան նշան և  
հրեշտակական սպասաւորութեան հան-  
դերձ, ուրախութեան և փրկութեան պատ-

մուճան որով մարգս զգեստաւորելով, ար-  
տաքին նշանի հետ ներքուստ ևս մաքրուած  
պէտք է սպասաւորէ եկեղեցական Ս. խոր-  
հուրդներին: Շապիկը պէտք է լինի սպի-  
տակ և պայծառ գունով:

2. Ուրար. Աստուծոյ պատուիրանապա-  
հուծեան և Ս. եկեղեցու ծառայութեան  
լուծ. սարկաւազը կրում է ձախ ուսին,  
ցոյց տալու համար թէ պատրաստովում է  
Աստուծոյ պատուիրանապահուծեան և  
եկեղեցու ծառայութեան այդ լուծը կրե-  
լու: Ուրարը նեղ և երկայն ժապաւէն է  
խաչանիշներով զարդարուած: Քահանան  
ուրարը կրում է ուսից պարանոցով վայր  
իջած կուրծքի վերայից. ցոյց տալու համար  
թէ ամբողջովին կրում է և իւր վիզը խո-  
նարհեցրել է եկեղեցու սպասաւորութեան  
և Աստուծոյ պատուիրանապահուծեան լծի  
տակ. քահանայական ուրարը փորուրար է  
կոչւում:

3. Գօփ. պատրաստականութեան և ըզ-  
գաստութեան նշան. գօտիով պնդելով

մէջքը պաշտօնեան պէտք է պրուէ իւր  
ազատի խորհուրդները և զգաստութեամբ  
ու խղճմտանքով ծառայէ Աստուծուն:

4. Բնական. Աստուածային զօրութեան  
նշան. որով բազուկները ամրացած պէտք  
է սպասաւորեն սուրբ խորհրդին և սրբ-  
բուած՝ պէտք է սրբագործեն սուրբ խոր-  
հուրդը: Բնականը նոյն է թեւոյ:

5. Ասկաս. նշան Աստուածային պատուի-  
րանապահութեան. վակասը կրում են ուժի  
վերայ, և վերան նկարած են տան և  
երկու առաքեալների պատկերները ցոյց  
տալու համար թէ, Ասկաս կրօյը սպասաւո-  
րում է նոյն խորհուրդին որ կատարուելով  
12 առաքեալների հաստատած եկեղեցինե-  
րի մէջ, վերկու թիւն է բերում այդ առա-  
քեալների քարոզութեանը և եկեղեցու  
վարդապետութեանը հեռեւոյ ու հաւա-  
ցող ժողովրդին:

6. Շուշան. Սուրբ խորհուրդը կատարելու  
արայծառ և վայելուչ զգեստ և պատասպա-  
րան կամ վրահ չարի հարուածների դէմ:

7. Սաղա-արք. չարի դէմ պատերազմելու համար գլուխը պաշտպանելու գլխարկ. Ասղաւարտ միտքը և զգայարանքը զսպող մի միջոց է: Սաղաւարտը պէտք է լինի մետաղով (արծաթ, ոսկի) պատած և ունենայ գագաթին խոչ. ի նշան՝ թէ կրօղը պէտք է ունենայ Քրիստոսի հեզութիւնը:

— Շապիկն ու ուրարը եկեղեցու ստորին պաշտօնեաներին է վերապահուած. իսկ մնացեալները շապկի հետ՝ սրբազնագործ պաշտօնեաներին՝ Ս. խորհուրդը կատարելիս. միմիայն շապիկը պէտք է կտաւ կամ մետաքս լինի. իսկ մնացեալները՝ գոյն զգոյն դիպակ:

Եկեղեցւոյ հովուապետներին յատկապաճ է և:

1. Եֆեօքան, որ շուրջառի վերայից կրում են ի նշան նոցա իշխանութեանը.

2. Բա-աղան, որ հովիւներն ու հովապետները կրում են ժողովուրդը հովուելու և ժողովրդի վերայ հոգևորական իշխանութիւն ունենալու իրրև ապացոյց:

3. Զեռեի խաչ, որ կրումեն հովիւներն ու հովապետները, իւրեանց իշխանութեան մէջ Յիսուսի խոնարհութիւնը միշտ աչքի առաջն ունենալու, և խաչով ժողովրդին օրհնելու համար:

5. Կոնեռ, որ կրումեն հայրապետները ի նշան հովապետական մաղախին. կոնքեռը քառակուսի ձև ունի, և գօտիից ծնկան վերայ է քաշ լինում:

Դ. Եարական խնկարկոթեան.

Քի. Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարիս. ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշտման պաղատանաց առաջիկայ սուրբ պատարագիս. խնկօք անուշիւք խումբ առեալ պարեմք ի վերնայարկ օրասրս խորանիս ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր որպէս բուրումն անուշահոտ խնկոց ստաշխից և կինամոնաց. և զմատուցողքս պահեա սրբութեամբ միշտ և հա-

նապազ քեզ սպասաւորել: Բարեխօսու-  
թեամբ մօր քո և կուսի ընկալ զաղաչանս  
քոց պաշտօնէիցս: Որ գերագոյն քան  
զերկինս պայծառացուցեր սուրբ զեկեզեցի  
արեամբ քո Քրիստոս, և ըստ երկնայնոցըն-  
կարգեցեր ի սմա զգասս առաքելոց և մար-  
գարէից սուրբ վարդապետաց, այսօր ժո-  
ղովեալ դասք քահանայից սարկաւազաց  
գպրաց և կղերիկոսաց, խունկ մատուցա-  
նեմք առաջի քո Տէր յօրինակ ըստ հնումն  
Զաքարիայ, ընկալ առ ի մէնջ զխնկանուէր  
մաղթանս, որպէս զպատարագն Աբէլի, զՆոյի  
և զԱբրահամու, բարեխօսութեամբ վերին  
քո զօրացդ, միշտ անշարժ սլահեա զաթոռ  
հայկազնեայս:

Խնդան յոյժ գուստր լուսոյ մայր սուրբ  
կաթուղիկէ մանկամբք քո Աիօն, զարդա-  
րեալ պճնեա հարսն պանծալի երկանման  
լուսաճեմ խորան, զի օծեալն Աստուած  
էնն ի յէէն անծախապէս ի քեզ միշտ պա-  
տարագի, Հօր ի հաշտութիւն մեզ ի քա-  
ւութիւն բաշխէ զմարմին և զարիւն իւր

սուրբ, լատն իւր կատարման սուրբ տնօրէ-  
նութեան, շնորհէ զթողութիւն կանգնողի  
տաճարիս:

Չանապահան կոյսն Մարիամ Աստուա-  
ծածին խոստովանի սուրբ եկեղեցի. ուստի  
տուաւ հայն անմահութեան և բաժակ մեզ  
ուրախարար. տուք օրհնութիւնս նմա հո-  
գևոր երգով:

Դ. Եկեղեցական անօրնէր.

1, Սկիհ. Ս. անօթ, որի մէջ սրբազործ-  
վում է Յիսուսի մարմին և արիւնը հացի և  
գինու տեսակով սկիհը կազմուած է երկու  
մասնից. աւազան իւր սլատուանդանով և  
կափառիչ կամ մազզմայ:

Աւազանը բաժակի իսկ մազզման՝ նշխարի  
համար է: Թէ աւազանը և թէ մազզման  
սկեաք է արծաթ լինին ոսկեզօծ:

2, Մասնաբաժնի, արծաթից ոսկեզօծ շի-  
նած մի փոքրիկ տուփ Ս. հաղորդութիւնը  
մէջը պահելու համար, որպէս զի անա-

կրնկալ գէպքերում՝ Յիսուսի մարմին և արիւնը մատուցուի հաւատացեալներին:

3. Բարձրագոյն մետաղից շինած խուճկ ծր-  
խելու գործիք. բուրվառը պէտք է ունե-  
նայ կրակարան և կափարիչ և չորս ջրղ-  
թայով միացած լինի գլխի հետ: Բուրվառը  
Քրիստոսի վարդապետութեան և նորանից  
բուրած խուճկը այդ վարդապետութեան  
քաղցրութեան նշան է. բուրվառի բուրումն  
մեր ջերմեռանդ աղօթքի նշանն էլ է:

4. Քշոյ. մետաղից շինած և ձողի վերայ  
հաստատած ոսպնաձև մի եկեղեցական  
անօթ, շուրջանակի զանգակ (բոժոժ) և  
կենդրոնում երկու կողմից վեցթևեան սե-  
րովբէներ ի նշան՝ թէ սուրբ խորհրդին  
յաներևոյթս սպասաւորում են սերովբէքը:

---

Ե. Եկեղեցի և նորա մասերը.

Եկեղեցի կոչւում է հաւատացեալների  
ժողովը և ժողովատեղը, Աստուծուն աղօ-  
թելու համար.

- Եկեղեցին ունի հետևեալ մասերը.
- ա. Սեղան՝ ուր մատուցվում է Ա. պատարագը:
- բ. Բեմ՝ որի վերայ հաստատուած է սուրբ սեղանը.
- գ. Դաս ուր կատարվում է ժամերգութիւն. դասի աջ կողմն որմի վերայ է Ա. մկրտութեան աւազանը:
- դ. Ժողովրդանոց, ուր հաւատացեալները խմբուելով՝ աղօթում են:
- Դասը ժողովրդանոցից պէտք է մի աստիճան բարձր լինի, որ ժողովուրդը կարողանայ ժամերգութիւնը տեսնել և հետևել ժամերգութեան. բեմը պէտք է չորս աստիճան կամ մօտ  $1\frac{1}{2}$  բարձր լինի դասից որպէս զի այնտեղ կատարած Ա. խորհուրդը տեսանելի լինի ժողովրդին. Սեղանը պէտք է դարձեալ  $1\frac{1}{2}$  բարձր լինի բեմից: Սեղանը եկեղեցու ամենաբարձր տեղն է և այնտեղ է մատուցվում Ա. Պատարագը:
- 1, Սեղանը երկու մասից է սեղան Ա. սիւն. թէ սեղանը և թէ սիւնը ունին խաչեր,

որոնք օժուած են. սեղանի ծածկոցները  
եօթն հաս պէտք է լինին, ծածկոցը՝ որի  
վերայ գրվում է սկիհը, կոչվում է մարմը-  
նակալ կամ գործողա: Սեղանի ճակատին  
երրորդ աստիճանի վերայ պէտք է լինի  
Աստուածամօր պատկերը Յիսուս մանուկը  
գրկին. ի նշան թէ, Աստուածամայրը որպիսի  
քաղցրութեամբ գրկել է Յիսուսին եկեղե-  
ցին էլ նոյն քաղցրութեամբ գրկած ունի  
ժողովուրդը, երկրորդ աստիճանի վերայ  
պէտք է լինի խաչ. ի նշան թէ Յիսուս  
խաչի վերայ թափելով իւր արիւնը վրկեց  
մարդկութիւնը: Սեղանի վերայ պէտք է լինի  
Ս. Աւետարանը, ի նշան թէ եկեղեցին և  
սեղանը հաստատուած են Ս. աւետարանի  
վերայ: Սեղանի վերայ անհրաժեշտ են եօթն  
աշտանակ, ի նշան Ս. Հոգու եօթնարփեան  
շնորհաց և եկեղեցու եօթն խորհուրդների:  
2, Սեղանից դէպ ի հիւսիս որմի վերայ է  
խորհրդամայրը, ուր պահվում է սկիհը խորհր-  
դանոցի առաջ է կատարվում գինու և հա-  
ցի նուիրուելը Յիսուսի յիշատակի համար:

այդ տեղ է կատարվում Գաբրիէլ Տրեշտակի  
Յիսուսի ծննդեան համար Ա. կոյս Մարիամին  
տուած աւետիքի յիշատակը՝ ասելով.

«Հոգին սուրբ եկեացէ ի քեզ և զօրու-  
թիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո»:  
Խորհրդանոցի առաջ հացի և գինու նուիր-  
ուելը Յիսուսի յիշատակի համար կոչվում  
է սպաս դնել. սպաս դնելուց յետոյ խոր-  
հրդանոցի վարագոյրը բաց պէտք է լինի  
և մօտը մում վառած ի նշան Ա. կոյսի  
յղութեան: Աերաբերման ժամանակ սկիհը  
վեր առնելուց յետոյ պէտք է խորհրդանոցը  
ծածկել վարագուրով և մամը անցնել. ի  
նշան թէ Ա. կոյսը Յիսուսից յետոյ կոյս  
մնաց՝ էլ զաւակ չունեցաւ, խորհրդանոցն  
էլ օծուած է:

3. Սեղանի ետեւն է լոսանքանը, ուր  
լցվում է պատարագչի լուացուած ջուրը:  
Ա. յդ ևս օծուած է. — Բեմը համարվում է  
Տրեշտակների բնակարան, իսկ սեղանը Աս-  
տուծոյ աթոռ և մարդկանց քաւարան:  
Սեղանի խաչկալի դռների վերայ պէտք է

նկարած լինի Ս. Թագդէոս և Ս. Բարդուղիմէոս առաքեալների պատկերները, ցոյց տալու համար թէ հայ եկեղեցին գոքա են հաստատել և գոքա են մեզ Քրիստոսի արքայու թեան գուռը բաց արել: Բեմը պէտք է ունենայ վարագոյր սրպէս զի ինչ որ Ս. պատարագի ժամանակ պէտք է չըտեսնի ժողովուրդը վարագուրով ծածկուած լինի սեղանը:

4. Դասից դէպ' ի տրեւիւք բիմի երկու կողմը պէտք է լինին աւանդատներ եկեղեցու անուսով աւանդուած հուէրները, զարդերը և անօթները պահելու համար, և աւանդատներում զգեստաւորելու համար:

---

2. Օջւած Ս. Էկեղեցւոյ

Եկեղեցու հիմքը գրվում է առաքեալների չորս աւետարանիչների և Ս. Գրիգոր լուսաւորչի անուսով օծուած քարերի վերայ, իսկ այդ քարերը գրվում են եկեղեցու անկիւններում որմնասիւնների և բեմի ան-

կիւններում. այդ քարերը 16 հատ են.  
բեմի քարերը Ս. տւեաւարանիչների անուանով  
է օծւում:

Նկեղեցին օծելիս օծւում են որմնասիւ-  
ները, երկու աւանդատների թէ ներսին և  
թէ դրսի ճակատները, բեմի համար ճա-  
կատը, եկեղեցու չորս սները չորս աւետա-  
րանիչների անուանով և դռները. ամբողջ  
եկեղեցին օծուած և Ս. Հոգու շնորհի բը-  
նակարան է դառնում:

---

Է. Երգք Ս. Պատարագի.

Հայր երկնաւոր, որ զորդիդ քո ետուր ի  
մահ վասն մեր պարտապան պարտեաց մե-  
րոց. հեղմամբ արեան սորա աղաչեմք զքեզ,  
ողորմեա՛ քո բանաւոր հօտի:

Արգի Աստուծոյ, որ պատարագեալ հօր՝  
ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս ի մեզ,  
հեղմամբ արեան քո սուրբ՝ աղաչեմք զքեզ  
ողորմեա՛ քո փրկեալ հօտի:

Հոգի Աստուծոյ, որ զփառակցի քո զխոր-  
հուրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռս  
մեր, հեղմամբ արեան սորա՝ աղաչեմք զքեզ  
հանգստի զհոգիս մեր ննջեցելոց:

— Քրիստոս պատարագեալ բաշխի ի մի-  
ջի մերում, ալէլուեա: Զմարմին իւր տայ  
մեզ կերակուր, և սուրբ զարիւն իւր ցօղէ  
ի մեզ, ալէլուեա: Մատիք առ տէր և առ էր  
զլոյս, ալէլուեա: Ճաշակեցէք և տեսէք  
զի քաղցր է տէր, ալէլուեա: Յրհնեցէք  
զտէր յերկինս, ալէլուեա: Յրհնեցէք զնա  
ի բարձունս, ալէլուեա: Յրհնեցէք զնա ա-  
մենայն հրեշտակք նորա, ալէլուեա: Յրհ-  
նեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա,  
ալէլուեա:

— Այաք ի բարութեանց քոց տէր, ճա-  
շակելով զմարմին քո և զարիւն, փառք ի  
բարձունս կերակրողիդ զմեզ: Ար հանապազ  
կերակրեցեր զմեզ, առաքեա ի մեզ զհոգե-  
ւոր քո զօրհնութիւն, փառք ի բարձունս  
կերակրողիդ զմեզ:

---

Ը. Սուրբ պատարագ.

Ս. Պատարագի խորհուրդը Յիսուս Քրիստոս հաստատեց վերնատանը խորհրդական ընթրիքի ժամանակ իրան յիշելու: Եւ Ս. պատարագը յիշեցնում է Յիսուսի ծնունդից մինչև խաչի վերայ հոգին աւանդել:

1, Սպաս գնելը նշանակում է Գարրիէլ հրեշտակապետի աւետիք տալը Ս. Մարիամ կուսին՝ Յիսուսի ծննդեան համար:

2, Վերաբերումն յիշեցնում է Ս. կոյս Մարիամի և Ս. Յովսէփի Նազարէթից Բեթղեհէմ գալը աշխարհագրութեան ցուցակի մէջ գրուելու համար:

3, Ողջունի ժամանակ Սկիհը կիսով չափ բանալով քահանայի կողմնակի կանգնելն և ձեռնամած դիտելը, սարկաւագի, «Ողջոյն տնօք», ասելով սեղան համբուրելն ու ողջոյնը քահանայական կամ հոգևորական գասին հաղորդելը, յիշեցնում է Բեթղեհէմի այրում՝ Յիսուսի ծնունդը: Քահանան կողմնակի կանգնելով յիշեցնում է Ս. Յովսէ-

փին, որ Յիսուսի ծննդեան ժամանակ այրի  
մէջ ներկայ էր և հաւատումէր ծնուածի  
Աստուծոյ որդի լինելուն: Սարկաւագի «Աղ-  
ջոյն տուք», տեսլով բեմից վար իջնելն և  
ողջոյնը հաղորդելն յիշեցնումէ Յիսուսի  
ծննդեան ժամանակ հրեշտակի ողջոյնը հո-  
վիւներին և աւետիքը թէ խաղաղարարը  
ծնուել է: Հոգեւորականների տեսնում  
կանգնելը ողջոյն ընդունելու համար յի-  
շեցնում է բացօթեայ հովիւներին, որոնք  
Յիսուսի ծննդեան լուրն առնելուց յետոյ  
զնացին նորան տեսնելու: Հոգեւորական-  
ների ողջոյնը ժողովրդին հաղորդելը յի-  
շեցնումէ թէ հովիւները Յիսուսի ծնունդը  
ուրիշներին էլ պատմեցին: Աղջոյնը ունի  
և այն նշանակուածիւնը, որ եկեղեցում  
ներկայ եղողները պէտք է միմեանց յան-  
ցանք մոռանան միմեանց սիրեն միմեանց  
հետ հաշտուեն, և ապա Քրիստոսի Ս. պա-  
տարագին ներկայ լինին ու հաղորդուեն:  
Աղջունի ժամանակ ողջոյն տուողը, օրը  
ինչ տօն էլ որ լինի պէտք է ասի. Քրիստոս

ի մէջ մեր յայտնեցաւ, իսկ սղջոյն առնողը  
պէտք է ասի. Օրհնեալ է յայտնութիւն  
Քրիստոսի: Արտօլհեալ յիսուսի ծննդեան և  
յայտնութեան յիշատակն է:

4) «Սուրբ սուրբ»-ից մինչև «Հայր երկնա-  
ւոր»-ը Յիսուսի արած գործերի և անելու  
գործերի պատմութիւն է արածներն են քա-  
րոզութիւնը բժշկութիւնները խաչուիլը,  
թաղուելը, յարութիւն առնելը, համբար-  
ձուիլը, Հօր Աստուծոյ աջ կողմը նստելը,  
իսկ անելունն են. եկրորդ փառաւոր գա-  
լուտը, և ահաւոր դատաստանը: Իսկ «Ար-  
գի Աստուծոյ»-ի ժամանակ արդէն նուի-  
րեալ հացն ու գինին գոյափոխուլով է Քրիս-  
տոսի մարմին և արիւն:

5) «Հոգի Աստուծոյ»-ից մինչև Քրիստոսի  
պատարագեալը բարեմաղթութիւններ և  
աղօթքներ են կենդանիների, ննջեցեալների  
և ամենայն տեսակ մարդոց համար: Յիսու-  
սի մարմին և արիւնը միջնորդ և բարեխօս  
ունենալով դէպի Աստուած:

6) «Լցաք ի բարութեանց»-ից մինչև ա-

Լեւոտարանը, շնորհակալութեան արտայայ-  
տութիւն է դէպ ի Յիսուս Քրիստոս, որ  
իւր մարմնով և արիւնով կերակրելով հա-  
ւատացեալներին, ինքն նոցա մեջ բնակուեց,  
նորա էլ իւր մեջ բնակուեցին:

Թ. Կիւրակէ.

Աստուած վեց օր երկինք և երկիր ստեղ-  
ծելովն և եօթներորդ օր հանգստանալով  
պատուէր և օրինակ տուեց որ մարդիկ էլ  
վեց օր աշխատեն և մի օր հանգիստ մնալով  
Աստուծոյ և իրանց հոգւոյ համար մը-  
տածեն:

Ամեն ազգ շաբաթուայ մէջ մի օր հան-  
գիստ է պահում: Քրիստոնեայք կիւրակէ  
օրն են հանգիստ պահում, որովհետև այդ  
օրն է Աստուծոյ մեծ շնորհները և անօրէ-  
նութիւնները կատարուել:

Կիւրակէ, որ կը նշանակէ տէրուՆական,  
շաբաթուայ օրերի կարգում միաշաբաթ

պէտք է կոչուի, և այդ միաշարաթօրը  
Աստուած սկսեց ստեղծել երկինքն ու եր-  
կիրը, միաշարաթօրը փառաւոր Հանդիսով  
Երուսաղէմ մտաւ. միաշարաթօրը յարու-  
թիւն առաւ և միաշարաթօրը Ս. Հոգին  
իջաւ առաքեալների վերայ: Այս պատ-  
ճառով էլ միաշարաթօրը մեր Համար  
սուրբ է:



## Յ Ա Ն Կ

---

		Երէս.
ԳԼ.	Ա.	Տեառընդառաջ . . . . . 1
		Երգ՝ Քրիստոս փառաց թագաւորն . . . . . 3
ԳԼ.	Բ.	Յովհաննէս Մկրտիչ, Մկրտութիւն և Աստուածայայտնութիւն Քրիս- տոսի . . . . . 4
		Երգք Զրօհնեաց—Ով զարմանալի և Այսօր ձայնն . . . . . 8
ԳԼ.	Գ.	Ծաղկազարդ . . . . . 9
		Շարական Ծաղկազարդի՝ Յորժամ եկն Յիսուս . . . . . 12
ԳԼ.	Դ.	Յիսուսի վերջին օրը . . . . . 13
ԳԼ.	Ե.	Յիսուսի մատնուիլը և դատուիլը . . . . . 17
ԳԼ.	Զ.	Յիսուսի խաչն ու մահը . . . . . 22
		Շարական՝ Ով սքանչելի . . . . . 25
ԳԼ.	Է.	Յիսուսի թաղումն . . . . . 25
		Շարական՝ Պարզեատուն ամենե- ցուն . . . . . 28
ԳԼ.	Ը.	Յիսուսի յարութիւնից համբար- ձումն . . . . . 28
		Շարական՝ Համբարձաւ տէրն . . . . . 33

ԳԼ. Թ.	Հոգեգալուստ . . . . .	34
	Շարական՝ Առաքելոյ աղանւոյ . . . . .	36
ԳԼ. Ժ.	Ս. Սանդուխտ կոյս . . . . .	37
	Շարական՝ Քև պարծի . . . . .	40
ԳԼ. ԺԱ.	Ս. Գրիգոր Լուսաւորիչ (մուտն ի վիրապն) . . . . .	41
ԳԼ. ԺԲ.	Ս. Գրիգոր Լուսաւորիչն (եւն ի վիրապէ) . . . . .	45
	Շարական՝ Հայաստանեայց Հայր. . . . .	49
ԳԼ. ԺԳ.	Շողակաթ և Տիմնարկութիւն Ս. Էջմիածնի . . . . .	50
	Շարական՝ Ուրախ լեր սուրբ եկեղեցի . . . . .	54
ԳԼ. ԺԴ.	Ս. Սահակ Պարթև, Ս. Մեսրոպ և Հայ տառերի գիւտը . . . . .	55
ԳԼ. ԺԵ.	Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ջանքերը Հայ դպրութիւնը ծաղկեցնելու և Սահակի անկումն . . . . .	59
ԳԼ. ԺԶ.	Նախարարների զղջալը, անարժան կաթուղիկոսներ և Ս. Սահակի մահը . . . . .	65
	Շարական՝ Որ յարմատոց . . . . .	67
ԳԼ. ԺԷ.	Թարգմանիչներ . . . . .	68
	Շարական՝ Որ զգիտութիւն . . . . .	71
ԳԼ. ԺԸ.	Ս. Ղևոնդեանք . . . . .	72

	Շարականք՝ Արք եկեալ հասեալ լինէին: Լուսաւորին	77
Գ. Լ. Ժ. Թ.	Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ վարչական կազմակերպութիւն	78
	Հոգևորական հաստատութիւններ Ռուսաստանում	83
	Հոգևորական հաստատութիւններ Տաճկաստանում	84
	Հոգևորական հաստատութիւններ Պարսկաստանում	85

ՅԱԻԵԼՈՒԱԾՔ.

Ա. Ս.	խաչ (գիւտ Ս. խաչին)	86
	Երևումն Ս. խաչին	88
	Խաչվերաց	89
	Շարական՝ Ապաւինեցաք	90
Բ.	Երգք Ս. Պատարագի — Խորհուրդ խորին	91
Գ.	Եկեղեցական զգեստներ	92
	Շարական խնկարկութեան—Յայտ յարկ	96
Դ.	Եկեղեցական անօթներ	98
Ե.	Եկեղեցի և նորա մասերը	99
Զ.	Օծումն Ս. Եկեղեցւոյ	103

Է.	Երգք Ս. Պատարագի — Հայր Եր-	
	կնաւոր: Որդի Աստուծոյ: Հոգի	
	Աստուծոյ: Քրիստոս պատարա-	
	գեալ: Լցաք ի բարութեանց .	104—105
Ը.	Ս. Պատարագ .	106
Թ.	Կիւրակէ .	109



88  
88  
88  
90  
91  
92  
98  
98  
99  
103

5  
6  
9

Buchelband von  
JOSEF ERDMANN  
BONN, Dottendorferstr. 144